№ 74 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 3

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 74 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 3

Ապրիլի 6-ին, կիրակի օրը, հանգուցեալ

ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

մահվան չորրորդ տարեդարձին՝ Վանքի աւագ եկեղեցու գաւթում, նրա գերեզմանի վրա, հոգեհանգիստ տեղի կունենայ և կը բացվի հայ ժողովրդի նուիրատուութեամբ կառուցված մահարձանը։
(հ.) 1—1

ՍՏԵՓԱՆ ԽՐԻՍՏԱՖՈՐՈՎԻՉ ՍՈՒԼԽԱՆԵԱՆԸ

սրանով պատիւ ունի հաղորդելու, որ, «ՆԱԴԷԺԴԱ» ԸՆԿ. հրդեհից ապահովագրելու օպէրացիաների լիկվիդացիայի պատճառով, ինքը յանձն է առել

1835 Թ. ՀԻՄՆՎԱԾ
ԵՐԿՐՈՐԴ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

գործակալութիւնը, և խնդարհաբար խնդրում է թէ նախկին ապահովագրողներին և թէ նորերին դիմել իրան, Ֆրէյլինեան և Սօլօլակեան փողոցների անկիւն, տուն իշխ. Բաթիեվայի, տէլէֆօն № 108. (уголъ Фрейлинской и Сололакской улицъ, домъ кн. Ратіевой, телеф. № 108, въ К° „Надежда“.)
(և. հ. շ.) առ. 3—2

Զատկական նուէր
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Մանկական նոր գիրք
Պատմուածքներ
կենդանիների կեանքից
Հրատարակութիւն
Ա. ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՕՆԴԻ
Գինն է 40 կոպ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցներին։
առ. 3—1

Մեծադիր պատկերների
ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ
ԼԵՒՈՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(Գանձասարայա փողոց, № 7)
Ընդունվում են ամեն տեսակ պատուէրներ՝ լուսանկարած մեծ ու փոքր պատկերներից՝ և մեծացվում են գեղարուեստական եռակով մինչեւ ցանկացված չափը։
Գները մինչև առաջիկայ Զատիկը
Յ ԷԺԱՆԱՅՎԱԾ ԵՆ
3 ռուբլուց սկսած
3 ռուբլուց սկսած։
Արուեստանոցը մինչև Զատիկ բաց կը լինի և կիրակի օրերը մինչև ժամը 4-ը։
(1, 3, 5, 6, 9) առ. 5—2

Մարտի 16, կիրակի օրից
ԲԱՑ Է
Նկարիչ ԱՐՇԱԿ ՓԷԹՎԱՃԵԱՆԻ
ԶՈՒՏ
ԱԿՎԱՐԷԼՆԵՐԻ
Յուցահանդէսը
Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում.
Բարեսիրական փողոց.
Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։
Մուտքը արժէ 30 կոպէկ։
Աշակերտները և զինուորները վճարում են կէսը։
(օ. ժ.) առ. 20—9

ՑԻՇԷՑԷՔ ՆՐԱՆՑ

Բազմաթիւ են մեզ դիմողները։

Ամեն օր խմբագրատուն են գալիս մեծ թուով կարօտեալներ, որոնք կեանքի ամենաանհրաժեշտ պիտոյքներից զուրկ են։

Այս տարի թանգութիւն էր տիրում ամեն տեղ, թէ գիւղում և թէ քաղաքում։ Այս տարի գիւղական աղքատութիւնը շատերին դուրս էր վանել շինական շրջաններից դէպի քաղաքները։

Օրական հացի կարօտ մարդիկ դիմում են աղերսանքներով՝ օգնելու նրանց այս ծանր օրերում։

Մենք օգնում ենք, որքան հնարաւորութիւն ունենք. իսկ շատերին յոյս ենք տալիս, որ Զատկի տօներին, նախորդ տարիների օրինակով, կունենանք մեր տրամադրութեան տակ մի որոշ գումար նպաստներ բաժանելու համար։

Յիշեցնում ենք այդ կարօտեալների մասին և յորդոր ենք կարդում հնարաւորութիւն ընծայելու խմբագրութեանը բաւարարութիւն տալու իրան դիմողներին։

Կարօտեալների թուում կան խեղճեր, որոնք ամաչում են առհասարակ դիմումներ անել և գերադասում են մեծ զրկանքներով անցկացնել իրանց օրերը, քան փողոց դուրս գալ և ձեռք մեկնել ուրիշներին։

Այդ խեղճերը սպասում են, որ մէկը իրանց օգնութեան գայ և մի քանի կոպէկ նուիրելով հնարաւորութիւն տայ նրանց մոռանալու քաղցի և կարիքի ձայնը գոնէ զատկական օրերին։

Յիշեցէք այդ խեղճերին և օգնութեան ձեռք կարկառեցէք նրանց։

Նրանք սպասում են մեր օգնութեան։

Ա. Բ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլիս, 2 ապրիլի

Մարգարէի ծննդեան օրվայ տօնի առիթով սուլթանը և պարսից շահը շնորհաւորական հեռագիրներ փոխանակեցին։ («Հ. Գ.»)

—

Լվով, 1 ապրիլի

Լրագիրների տեղեկութիւններին նայած, ոստիկանութիւնը ձերբակալել է փոխարքայի մարդասպանի հօրեղբօր աղջկան և երեք քոյրերին։ Ապա խուզարկութիւններ է կատարել Ուկրայնայի կուսակցութեան «Սվօբոդա» և «Դէլօ» լրագիրների խմբագրատներում և խմբագիր Ցեգելսկու բնակարանում։ Ուկրայնայի ուսանողների միութեան շինութեան մէջ ձերբակալված է համալսարանի ուսանող Զամօրան։ Քննիչը մարտի 30-ին և 31-ին քննեց մարդասպանին և միւս ձերբակալվածներին։

Համայնական խորհուրդը ցոյց կազմակերպեց ի նշան սգի և որոշեց պսակ դնել փոխարքայի դագաղի վրա և ամբողջ կազմով ներկայ լինել թաղմանը։ («Հ. Գ.»)

—

Լվով, 2 ապրիլի

Առաւստեան կայացաւ փոխարքայի թաղումը կայսրի ներկայացուցիչ գլխաւոր արարողապետ Խոլօնէվսկու, մինիստր-նախագահ Բէկկի, Բինէբա և Կօրիտօվսկի մինիստրների և այլ բարձրաստիճան պետական պաշտօնեաների և բազմաթիւ պատգամաւորութիւնների ներկայութեամբ։ Փոխարքայի պալատի առաջ լանդմարշալ կոմս Բատէնին արտասանեց մի վերին աստիճանի զգացված ճառ հանգուցեալի յիշատակին։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 1 ապրիլի

Կայսրը առանձին ունկնդրութեան ընդունեց ներքին գործերի մինիստրին Գալիցիայի փոխարքայ կոմս Պոտոցկու սպանութեան զեկուցումը լսելու համար։ Լսելուց յետոյ կայսրը ատելութիւն և զայրոյթ յայտնեց նողկալի յանցանքի առիթով։ («Հ. Գ.»)

—

Ուրմիա, 2 ապրիլի

Քիւրդերը աւազակութիւնները սկսել են։ Հինգ օրվայ ընթացքում յարձակման ենթարկվեցին 16 գիւղեր. 8 գիւղացիներ սպանվեցին, մի քանիսը վիրաւորվեցին։ Քիւրդերը քշել տարել են մօտ 2000 գլուխ տաւար, գողացել են մեծ քանակութեամբ տնային իրեր, կողոպտել են 2 բարական։

Ուրմիայի նոր նահանգապետ Մուխտեշամ-ուս-Սալթանէն իր երկար ջանքերից յետոյ կարողացաւ վերահաստատել տալ Նասրէդդին-շահի կայացրած այն կանոնը, որի համաձայն մահմեդականութիւն ընդունած քրիստոնեան իր ազգականների միակ ժառանգն է դառնում։ Քրիստոնեաները շատ անհանգիստ են այն բազմաթիւ պահանջներից, որ անում են հաւատափոխները, որոնց թիւը տեղումս շատ մեծ է։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 2 ապրիլի

Անցումանի անդամները ժամանակաւոր գեներալ-նահանգապետի առաջնորդութեամբ ժողովվեցին հեռագրական գրասենեակում հեռագրով բանակցութիւններ վարելու համար Ֆարման-Ֆարման պրինցին Թաւրիզում թողնելու մասին։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 1 ապրիլի

«Կօր. Բիւրօյին» հաղորդում են Կ. Պոլսից, որ պատրիարքարանը տեղեկութիւն է ստացել, որ. Էրզնինկի և Մօնաստիրի վիլայէթներում բազմաթիւ ձերբակալութիւններ են տեղի ունենում ականաւոր քաղաքացիների մէջ այն կասկածների ազդեցութեան տակ, թէ նրանք մասնակցելու են հրոսակախմբերի կազմակերպութեան գործին։ Ձերբակալվածների թուում կան բժիշկներ, ուսուցիչներ, քահանաներ։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 2 ապրիլի

Բերդապահ զօրքի հին եկեղեցին հրդեհի մէջ է։ Կրակը սպառնում է հարևան տներին։

Կարծում են, որ հրդեհը ծագեց էլեկտրական հոսանքը կարճ ժամանակով փակելուց։ Դէպքի տեղն եկան գահաժառանգ պրինցը, ֆելդմարշալ Գանկէ և քաղաքապետը։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 2 ապրիլի

Եկեղեցու հրդեհի ժամանակ՝ 1870—1871 թ. թ. պատերազմի օրերից պահվող բազմաթիւ դրօշակներից ազատեցին միայն մէկը։ Եկեղեցին բոլորովին այրվեց։ («Հ. Գ.»)

—

Վաշինգտոն, 2 ապրիլի

Պետական քարտուղար Բուտի և ռուսաց դեսպանի միջև տեղի ունեցաւ մի երկար խորհրդակցութիւն Մանջուրիայի իրերի դրութեան մասին, որից յետոյ Բօզէնը մեկնեց Ռուսաստան, տանելով հետը պետական վարչութեան վերջնական պատասխանը այդ գործի նկատմամբ։ Խորհրդակցութիւնը համարում են միանգամայն գոհացուցիչ երկու կողմերի համար։ («Հ.Գ.»)

—

Եկատերինօսլաւ, 2 ապրիլի

Երբ տեղս հասաւ № 4 գնացքը, պօստային վագոնում նամակատարին գտան սպանված, իսկ պօստային պաշտօնեային մերձիմահ դրութեան մէջ, որը և շուտով մեռաւ։ Պայուսակները կտրտված են, ծրարները յափշտակված։ («Հ. Գ.»)

—

Կաղան, 2 ապրիլի

Ուսանողների ժողովը որոշեց փակել համալսարանը մինչև օգոստոսի 20-ը, պատճառաբանելով այդ որոշումը աւտոնոմիան խլելով և ազատ ունկընդիրներին քննութեան չենթարկելով։ Ոստիկանութիւնը ձերբակալեց ժողովին ներկայ եղողներին, որոնց թիւը 400-ի է հասնում։ («Հ. Գ.»)

—

Հայերի կոտորածը Վանում

Կ. Պոլսի անգլիական դեսպանութիւնը միացաւ Ռուսաստանի և Ֆրանսիայի քայլերին հայերի կոտորածի առիթով Վանում։

Այս օրերս սպասվում է երկու բատալիոն կանոնաւոր զօրքերի գալուստը Վան։ Միաժամանակ պէտք է տեղի ունենայ այն պաշտօնեաների հեռացումը իրանց պաշտօնավարութիւնից, որոնք մեղսակից են հաւատվում հայերի կոտորածին։ Այս օրերս Երզրումից կը հասնի Վան Թիւրքաց յանձնաժողովը՝ ժանդարմերիան վերակազմելու համար։

—

Վերջին ժամանակներս Եգիպտոսից արտաքսվել են բազմաթիւ հայեր։ Այդ արտաքսումը կապ ունի Արփիար Արփիարեանի սպանման հետ։ Արտաքսվածների մի մասը դիմել է Բուլգարիա, բայց, չը նայած այն հանգամանքին՝ որ օրինաւոր անցագիրներ է ունեցել, բուլգարական կառավարութիւնը մերժել է արտաքսվածների մուտքը բուլգարական սահմանները։ Մերժվածներն ստիպված են եղել ուրիշ տեղ ապաստանութիւն որոնել։

—

Թավշանճեանի սպանութեան առիթով, ինչպէս յայտնի է, ամերիկեան Միացեալ-Նահանգների կառավարութեան կողմից ձերբակալվեց և Ղևոնդ վարդապետ Մարգուկէսեանը, որը պատկանում էր Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան Արզուման-Վահէ խմբակին և գործօն ու եռանդուն դեր էր կատարում այդ խմբակի գործերում։ Մարգուկէսեանը ձերբակալելուց յետոյ, հանգուցեալ կաթողիկոսի կողմից, կարգալոյծ եղաւ՝ ամերիկահայ թեմի առաջնորդ Սարգիսեանի առաջարկութեան համաձայն։ Այժմ, ինչպէս հաղորդում են արտասահմանեան մի քանի հայ թերթեր, վերջերս Նիւ-Եորկում տեղի է ունեցել Մարգուկէսեանի դատավարութիւնը, և կարգալոյծ վարդապետը մեղաւոր ճանաչվելով՝ դատապարտվել է տաժանակիր աշխատանքների՝ երկու տարի և երկու ամիս ժամանակով։

—

«Нов. Вр.» լրագիրը նորից է հաղորդում կովկասեան բարձրագոյն ադմինիստրացիայի մէջ մօտ ապագայումս տեղի ունենալիք փոփոխութիւնների մասին։ Ամենից հաւանական է համարվում, որ նշանակվի գեներալ Մեյեր - Զակօմելսկին։ «Բեպ»-ը իր կողմից հաղորդում է առաջիկայ բարձրագոյնների մասին երկրի կառավարութեան կազմակերպելու գործում։ Ադմինիստրացիայի զինուորական մասի ղեկավարութիւնը, լրագրի ասելով, մատրուեթիւն կայ յանձնել գեներալ Բենկենդորֆին, իսկ քաղաքացիական մասի ղեկավարութիւնը՝ գեներալ Զարուբայեվին։ Սպասում են, որ մօտ օրերս կը նշանակվեն։

—

Ապրիլի 1-ին ուշ երեկոյեան Բաքուում տեղեկութիւն է ստացվել, որ Լենքորանի մօտիկ աւազակային մի մեծ խումբ, անցնելով սահմանը, յարձակում է գործել ռուսաց սահմանապահ պահակախմբի վրա։ Հրացանաձգութեան ժամանակ սպանված են մի օֆիցէր և մի քանի զինուորներ։ Բաքուի նահանգապետը, զօրքերի հրամանատար գեն.-մայոր Մ. Ա. Ֆօլբաումի հետ միասին, նոյն օրը երեկոյեան կուր-կասպիական շոգենաւով դէպքի տեղն է ուղարկել 5 օֆիցէր, 200 զինուորներ և 50 ձիեր։ («Касп.»)

—

Բիւրօկրատական շրջաններում տեղեկացիա է առաջ բերել այն լուրը՝ թէ Դօբրովոլյնի նաւատորմից՝ մօտ ժամանակներս ծովային մինիստրութեան գնած Սմոլենսկ շոգենաւը շտապով Լիբաւայից փոխադրվում է Սեվաստոպոլ, իբրև ապրանքատար, սև-ծովեան նաւատորմի համար։ Բարձր խաւերում չափազանց ուշադրութեամբ հետևում են «Սմոլենսկի» անցնելուն Դարդանելի նեղուցով, որը ռուսական պատերազմական նաւերի համար փակ է յայտարարված։ Դօբրովոլյնի նաւատորմի շոգենաւերը մինչև այժմ ազատ կերպով կարողանում էին մտնել Դարդանել, չը նայելով որ նրանք նպաստամատոյց ռազմանաւերի բնաւորութիւն ունեն։ Այժմ կարելի է սպասել, որ Թիւրքիան արգելք կը հանդիսանայ ծովային մինիստրութեան պատկանող նաւի անցնելուն։ («Р. Утро»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԳԸ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Պ*)

Ծխական դպրոցների ձայնագրութեան ուսուցման և դասաւանդման մասին հազիւ կարելի է որևէ բան ասել։ Այդ առարկան գրեթէ բացակայում է այդ դպրոցներում, և եթէ գոյութիւն էլ ունի, պէտք է վերագրել պատահականութեան։

Եւ երգեցողութեան առարկայի ընկած վիճակը, կարող ու ձեռնհաս դասատուների չը գոյութիւնը, ինչպէս այդ ցոյց ենք տուել մեր անցեալ յօդուածով, պարզ ապացոյցներ չէին արդեօք, որ ձայնագրութեան առարկան աւելի ու աւելի անմխիթար վիճակի մէջ պէտք է լինի քան երգեցողութիւնը։

Մանկան սրտին ու հոգուն ամենամօտիկ արտայայտութիւնը—երգը իր առաջին շրջանում անխնամ ու անկանոն աւանդելուց յետոյ հնարին է արդեօք պէտք եղած կերպով ձայնագրութիւն աւանդել. անկասկած ոչ։ Երկրորդը առաջինի շարունակութիւնն է։

Գանք միջնակարգ կամ թեմական դպրոցներին։

Թեմական դպրոցներում, որոնց թուում և Գէորգեան ճեմարանը, ձայնագրութեան առարկան ունեցել է իր առանձին տեղը։ Երբեմնապէս նա եղել է և պարտադիր աւելի՝ քան կարելի էր սպասել։

Մօտաւորապէս երեք շրջանի կարելի է բաժանել թեմական դպրոցների ձայնագրութեան դասաւանդման ընթացքը։

Առաջին շրջան, երբ հայկական ձայնագրութեան բարենորոգիչ հանգուցեալ Ն. Թաշճեանի միջոցով նախ Գէորգեան ճեմարանում և ապա, նրա աշակերտների միջոցով, միւս թեմական դպրոցներում—ամենեռանդուն կերպով դասաւանդվել սկսեց հայկական ձայնագրութիւնը։

Առարկան պարտադիր էր և կրում էր հոգևոր բնաւորութիւն։ Սանները, որպէս ապագայ հոգևորականներ, պարտաւոր էին սովորել ձայնագրութիւնը և նրանով շարականներ ու մեղեդիներ երգելու արուեստը։

Եւ իրաւ, այդ շրջանում մեր հոգևորականացումները շատ վարժ կարդում էին այս կամ այն շարականի կամ մեղեդիի եղանակը հայկական ձայնանիշներով և նոյն իսկ ազատ յօրինուածքներ անում։

Երկրորդ շրջան, երբ ասպարէզ եկան եւրոպական երաժշտական կրթութեամբ պատրաստված ուսուցիչներ և թեմական դպրոցներում հայկականի հետ միաժամանակ մտցրին և եւրոպական ձայնագրութիւնը։

Այդ շրջանի փայլուն ներկայացուցիչը կարելի է համարել հանգուցեալ Մ. Եկմալեանը Ներսիսեան դպրոցում։

Սակայն այդ շրջանի երաժիշտ դասատուները, թէ միւս և թէ Ներսիսեան դպրոցում, հայկականի հետ եւրոպականը աւանդելով հանդերձ, առարկային զօրեղ ընթացք չէին տալիս։ Այս անգամ արդէն ձայնագրութեան առարկան աւելի մեծաշնորհ էր ընտրեալներին, այսինքն ձայնաւորներին, որոնք երգիչ անուանվելու բարձր կոչման էին արժանացել։

Երաժիշտ դասատուները իրանց գլխաւոր հոգը և ուշադրութիւնը դարձրել էին եկեղեցական քառաձայն երգեցողութեան զարգացման վրա և հայկական կամ եւրոպական ձայնագրութիւնը աւանդելու գլխաւոր նպատակը խուժը պատրաստելու դիւրութիւն առաջ բերելու ձգտն էր կայանում։

Եւ այս շրջանում եկեղեցական քառաձայն երգեցողութիւնը ժամանակորէն և բազմաձայն խմբական երգեցողութիւնը ընդհանրապէս, նամանաւանդ Ներսիսեան դպրոցում, շնորհիւ Եկմալեանի, հասաւ իր զարգացման փայլուն աստիճանին, որը զարկ տուեց եւրոպական կարողութեան ընդանանուր ժողովրդական խաւերում և բազմական նաւերի համար փակ է յայտարարված։ Դօբրովոլյնի նաւատորմի շոգենաւերը մինչև այժմ ազատ կերպով կարողանում էին մտնել Դարդանել, չը նայելով որ նրանք նպաստամատոյց ռազմանաւերի բնաւորութիւն ունեն։ Այժմ կարելի է սպասել, որ Թիւրքիան արգելք կը հանդիսանայ ծովային մինիստրութեան պատկանող նաւի անցնելուն։ («Р. Утро»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԳԸ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Պ*)

Ծխական դպրոցների ձայնագրութեան ուսուցման և դասաւանդման մասին հազիւ կարելի է որևէ բան ասել։ Այդ առարկան գրեթէ բացակայում է այդ դպրոցներում, և եթէ գոյութիւն էլ ունի, պէտք է վերագրել պատահականութեան։

Եւ երգեցողութեան առարկայի ընկած վիճակը, կարող ու ձեռնհաս դասատուների չը գոյութիւնը, ինչպէս այդ ցոյց ենք տուել մեր անցեալ յօդուածով, պարզ ապացոյցներ չէ՞ն արդեօք, որ ձայնագրութեան առարկան աւելի ու աւելի անմխիթար վիճակի մէջ պէտք է լինի քան երգեցողութիւնը։

Մանկան սրտին ու հոգուն ամենամօտիկ արտայայտութիւնը—երգը իր առաջին շրջանում անխնամ ու անկանոն աւանդելուց յետոյ հնարին է արդեօք պէտք եղած կերպով ձայնագրութիւն աւանդել. անկասկած ոչ։ Երկրորդը առաջինի շարունակութիւնն է։

Գանք միջնակարգ կամ թեմական դպրոցներին։

Թեմական դպրոցներում, որոնց թուում և Գէորգեան ճեմարանը, ձայնագրութեան առարկան ունեցել է իր առանձին տեղը։ Երբեմնապէս նա եղել է և պարտադիր աւելի՝ քան կարելի էր սպասել։

Մօտաւորապէս երեք շրջանի կարելի է բաժանել թեմական դպրոցների ձայնագրութեան դասաւանդման ընթացքը։

Առաջին շրջան, երբ հայկական ձայնագրութեան բարենորոգիչ հանգուցեալ Ն. Թաշճեանի միջոցով նախ Գէորգեան ճեմարանում և ապա, նրա աշակերտների միջոցով, միւս թեմական դպրոցներում—ամենեռանդուն կերպով դասաւանդվել սկսեց հայկական ձայնագրութիւնը։

Առարկան պարտադիր էր և կրում էր հոգևոր բնաւորութիւն։ Սանները, որպէս ապագայ հոգևորականներ, պարտաւոր էին սովորել ձայնագրութիւնը և նրանով շարականներ ու մեղեդիներ երգելու արուեստը։

Եւ իրաւ, այդ շրջանում մեր հոգևորականացումները շատ վարժ կարդում էին այս կամ այն շարականի կամ մեղեդիի եղանակը հայկական ձայնանիշներով և նոյն իսկ ազատ յօրինուածքներ անում։

Երկրորդ շրջան, երբ ասպարէզ եկան եւրոպական երաժշտական կրթութեամբ պատրաստված ուսուցիչներ և թեմական դպրոցներում հայկականի հետ միաժամանակ մտցրին և եւրոպական ձայնագրութիւնը։

Այդ շրջանի փայլուն ներկայացուցիչը կարելի է համարել հանգուցեալ Մ. Եկմալեանը Ներսիսեան դպրոցում։

Սակայն այդ շրջանի երաժիշտ դասատուները, թէ միւս և թէ Ներսիսեան դպրոցում, հայկականի հետ եւրոպականը աւանդելով հանդերձ, առարկային զօրեղ ընթացք չէին տալիս։ Այս անգամ արդէն ձայնագրութեան առարկան աւելի մեծաշնորհ էր ընտրեալներին, այսինքն ձայնաւորներին, որոնք երգիչ անուանվելու բարձր կոչման էին արժանացել։

Երաժիշտ դասատուները իրանց գլխաւոր հոգը և ուշադրութիւնը դարձրել էին եկեղեցական քառաձայն երգեցողութեան զարգացման վրա և հայկական կամ եւրոպական ձայնագրութիւնը աւանդելու գլխաւոր նպատակը խուժը պատրաստելու դիւրութիւն առաջ բերելու ձգտն էր կայանում։

Եւ այս շրջանում եկեղեցական քառաձայն երգեցողութիւնը ժամանակորէն և բազմաձայն խմբական երգեցողութիւնը ընդհանրապէս, նամանաւանդ Ներսիսեան դպրոցում, շնորհիւ Եկմալեանի, հասաւ իր զարգացման փայլուն աստիճանին, որը զարկ տուեց եւրոպական կարողութեան ընդանանուր ժողովրդական խաւերում և

*) Տես «Մշակ» № 35.

մասնաւորապէս ձայնագրութեան նշանակութեան բարձրացմանը սաների աչքում։

Դպրոցական վարչութիւններն էլ սկսեցին լուրջ վերաբերվել դէպի ձայնագրութեան առարկան։

Երրորդ և ներկայ շրջան, որը ընդհանուր առմամբ աւելի անվիթար է քան անցեալ շրջանները։

Չը նայած որ ժամանակակից քաղաքակրթութեան մէջ երաժշտական գիտութիւնը, իբրև անհրաժեշտ գործոն, պահանջ է դարձել, չը նայած որ երաժշտութեան կարևորութիւնը կրթական գործում անվիճելի անհրաժեշտութիւն է ճանաչված, այնուամենայնիւ մեր թեմական մինչև ակարգ դպրոցներում երաժշտութեան կարևորագոյն ճիւղը—ձայնագրութիւնը, այս անգամ արդէն կորցրած և՛ հայկականը, իբրև օգտակար գիտելիք, իբրև կարևոր առարկայ չէ ճանաչված։

Փաստ՝ որ մեր հինգ թեմական դպրոցներից, հաշուած և ճեմարանը, երեքում ձայնագրութեան իսկական դասատուներ չը կան։

Հրապարակի վրա հանրածանօթ և գրագէտ-երաժիշտ Կոմիտաս վարդապետն է, որը սակայն Գէորգեան ճեմարանի պատերի մէջ է սպառում իր գիտութիւնն ու հանճարը, և Գ. Միրզայեանն է Ներսիսեան դպրոցում, որը, ճշմարտութիւնը խոստովանած լինելու համար պէտք է ասենք, իրաւ է, դպրոցում ձայնագրութեան առարկայի իրական նշանակութիւնը բարձրացրել է, առարկային պարտադիր լինելու և նրա օգտակարութեան գաղափարը ներշնչել է, սակայն իր երաժշտական իսկական կոչումը մի կողմ թողած՝ աւելի շատ ոչ-ժամանակագրական գործերումն է վատնում իր ժամանակն ու էներգիան։

Չենք խօսում երաժշտական կանոնաւոր խմբերի կազմակերպման, նրա միջոցով աշխարհիկ, ժողովրդական և եկեղեցական երաժշտութեան տարածման, ժողովրդականացման կատարեալ բացակայութեան մասին միւս թեմական և նամանաւանդ Ներսիսեան դպրոցում, որը այդ գործում հայկական փառաւոր անցեալ է ունեցել և որի այժմեան ուսուցիչը, աւելացնենք՝ և դպրոցի վարչութիւնը, դատապարտելի վերաբերմունք են ցոյց տալիս։

Այսպէս ուրեմն մեր թեմական դպրոցներում ձայնագրութեան առարկայի վերաբերմամբ սաները ընդհանրապէս անտարբեր, դպրոցական վարչութիւնները կատարելապէս անփոյթ, իսկ ամենից էականը կարող ու ձեռնհաս դասատուների հաւաքելու բացակայութիւն, որով այդ դպրոցներից աւարտած երիտասարդ ուսուցչացուները ոտք են կոխում իրանց նոր ասպարէզը առանց գեղարուեստի զէթ մի ճիւղից տարրական գաղափար իսկ ունենալու։

Եւ շնորհիւ այդ հանգամանքի՝ մեր բոլոր ծխական, գլխաւորապէս գաւառական դպրոցները զրկված են երգեցողութեան գիտելիքներին ծանօթ ուսուցիչներից, որով և մեր դպրոցները պատրաստում են մի շարք սերունդներ, հիմնովին զուրկ գեղարուեստական ճաշակից։

Ազատ Մանուկեան

«ԿՈՎԿԱՍԸ ԱՒԵՐՎՈՒՄ Է»

Մի քանի օր սրանից առաջ «Մշակի» մէջ, հեռագրական աղբիւրից քաղելով, մենք հաղորդել էինք տիրահռչակ Մենշիկովի մի նոր յօդուածի մասին, որ լոյս էր տեսել, ի հարկէ, «Нов. Вр.»-ի էջերում «Կովկասը աւերվում է» վերնագրի տակ։ Այժմ հընարաւորութիւն ունենալով ամփոփ գաղափար տալու մեր ընթերցողներին այդ յօդուածի մասին, մենք առաջ ենք բերում քաղուածքներով։ Ահա նրա զառանցանքների էական կէտերը.

Կովկասում տիրող ներկայ անիշխանութեան գլխաւոր պատճառը—տեղական իշխանութեան թուլութիւնն է։ Դա չէ նշանակում, որ Փոխարքային քիչ իրաւունքներ են տրված։ Ընդհակառակը, նրա իրաւունքները անագին են։

Թղթակցի կարծիքով, Փոխարքան, չը նայելով որ չէ կարողանում օգտվել այդ իրաւունքներից, ձգտում է էլ աւելի լիազօրութիւններ ստանալ։

Կոմս Վլադիմիր Դաշկովի կազմած փոխարքայութեան նախագծի մէջ, Կովկասը մտադրութիւն կայ դարձնելու, համարեա, Ռուսաստանի մի ինքնավար սատրապութիւն։ Հաւանաբար այդ նախագծի (յօդ. 8) Փոխարքային վերապահվում է ամբողջ Կովկասեան զօրաբանակի հրամանատարի և բոլոր տեսչութիւնների, բացի դատաստանական, պետական կօնտրոլի և պետական բանկի, մինիստրների իրաւունքները։ Նախագծի 23-րդ յօդ. Փոխարքային վերապահվում է մի տեսակ դիկտատուրայի իրաւունք, որը նոր օրինականացում չէ պահանջում։ Ճանապարհների հաղորդակցութիւնը, դպրոցները, հողաշինութիւնը, ֆինանսները և այլն, այդ բոլորը պէտք է կենտրոնացվեն Փոխարքայի ձեռքում։ Բայց ահա օրհասական հարցը. նա ինքը ում ձեռքում պէտք է լինի։

Ապա ժամանակելով կոմսի զառաջեալ տարիքը և այն հանգամանքը, որ նա ակամայ զոհ է դառնում իր սեփական ժիծաղաբերութեան, շարունակում է.

Թիֆլիսից գրում են իբրև մի այնպիսի բանի մասին, որը ամենևին գաղտնիք չէ, թէ հայ երևելիների, գլխաւորապէս ֆինանսականների, ազդեցութիւնը սաստիկ աճում է ապարանքում։ Թաժաշվիները, Արամեանները, Լազարեանները և այլք, կովկասում լաւ ու վատ եղանակներ են պատրաստում։ Ինչպէս և բոլոր միւս երես առած այլազգիները, հայերից ոմանք առանց քաշվելու պարծենում են իրանց ազդեցութեամբ։ Այս ինչ մարդուն խոստանում են «նշանակել» նահանգապետ, մի ուրիշին էլ աւելորդ հայրենասիրութեան համար «վոնտել»։ Այդ զրաբաղդ ռուսական հայրենասիրութեան վրա Փոխարքայի ապարանքում հրապարակօրէն հեգնում են, ծաղրում, բարձր քրքիջով ուղեկցում են ռուս զինուորականներին, որոնք չը դիմանալով այդ բարոյական տանջանքին, դուրս են գնում։ Բանն այնտեղ է հասնում նոյնիսկ, որ ռուս մարդիկ պալատ գալիս են միայն ծառայութեան ծանր պարտականութիւնից զրված։

Եւ ահա այդ ամենի համար իսկական հայակերը իր ամբողջ զրպարտութեան տարափն ուղղում է հայութեան, այդ քրիստոնեայ-հրէաների զլխին։

Բայց հայերի մէջ,—ասում է նա,—ինչպէս հրէաների մէջ, ամենից վտանգաւորը նրա՝ քաղաքականութեամբ պարապվող ինտելիգենցիան է, որը, մտնելով իրան խորթ ազգերի մէջ, պառակտում և խռովութիւն է սերմանում, հասցնելով նրանց մինչև իսկ արիւնահեղ վախճանի։ Գաղտնիք չէ, որ Կովկասի, ինչպէս և ծայրագաւառների, ազգաբնակիչներ իր խոշոր մասով վարակված է կաշառակերութեամբ, իսկ Կովկասեան բոլոր ազգերի մէջ հայերը ամենից աւելի հարստութիւն ունեն։ Դրա ոյժով հայերին աջողվեց ազգաբնակիչների մի մասը գրաւել դէպի իրանց՝ ժամանակից անելով մուսուլման ազգաբնակութեան դէմ մղվող քաղաքական կուիւ։ Հայերը, յենվելով տեղական պալատում ունեցած իրանց ազդեցութեան վրա, իրանց չափազանց յանդգնաբար են պահում։

Հայակեր յօդուածագիրը, սակայն, զրպարտութիւնները բաւական չը համարելով, դիմում է բացարձակ պրովոկատորութեան։ Թուրքը և հայ ազգաբնակութիւնը իրար դէմ գրգռելու նպատակով, հեռաձայնաւորի խօսքերն է դնում Թիֆլիսից Իրան դիմող նամակագրի բերանում, որը իբր թէ լսել է թիւրքական սահմանագլխի վրա.

Այնտեղ և՛ հայերը, և՛ Վ.-ի նշանակած պաշտօնեաները, որոնց չէ կարելի ռուս անուանել, բացարձակ կերպով ասում են թուրքերին. «Ձեր վերջին օրերն էք անցկացնում այստեղ, շներ! Ռուսաց թագաւորը արդէն գալիս է կնքել անպիտացոց հետ և ձեր բոլոր հողերը տալիս է թիւրքահայերին։ Այստեղ նրանց թագաւորութիւնը պիտի լինի՝ Ռուսաստանի հետ դաշնակից»։

Մենշիկովի ընկեր անանուն նամակագիրը, ստուգելով, իմացել է,

որ թուրքերին Կովկասից հալածելու մասին լուրեր տարածում են հայ յեղափոխական ագիտատորները ոստիկանութեան լիակատար պարտազանցութեան շնորհիւ։

Ի հարկէ, այդ նպատակը պարզվում է իսկոյն, երբ անանուն նամակագիրը ըսկսում է աքացել... Աղերսում է՝ ասել Պետերբուրգում բոլորին, ում համար սիրելի է Ռուսաստանը,

որ Կովկասի գործերը շատ վատ են, որ տեղական յեղափոխականները (հայ, ռուս, լեհ, վրացի և այլն) ամեն ջանք գործ են դնում թիւրքիայի հետ պատերազմ առաջացնելու, և ամենից աւելի քիչ ուզողը այդ պատերազմը՝ Կովկասի մուսուլման ազգաբնակութիւնն է։ Յեղափոխականների համար կարևոր է դուրս հրել թուրքերին, իբրև տեղական միակ տարրը, որ յեղափոխական պրոպագանդաներին ենթարկվող չէ։ Ինչ հեռանք էլ ունենալու լինի պատերազմը, յեղափոխականները յոյս ունեն, որ իրանք գործը կը տանեն։ Եւ՛ ռուս, և՛ թիւրք կառավարութիւնները, որոնք զսպում են սահմանակից ազգութիւնների խռովութիւնները, դրանով կը թուլանան և այն ժամանակ...

Եթէ այդ նամակը գոյութիւն էլ ունեցել է իրօք, ապա դժուար չէ կարծել, որ նրա հեղինակը պէտք է լինի «իսկական պրովոկատոր», հայութեան ուխտեալ թշնամիներից մէկը, որ ձգտում է յանկապէս հայերին կասկածելի դարձնել կառավարութեան աչքում։ Այնուհետև պատերազմի վրտանգը ստիպում է Մենշիկովին սարատեգիական քննադատութեան ենթարկել Կովկասը։

Թիֆլիսից Կարս տանող երկաթուղային գիծը կը մնայ բաց, իսկ Ռուսաստանից նոր զինուորական ոյժերի տեղափոխութիւնը կը դժուարանայ նրանով, որ թիւրքերը հաւանօրէն կը գրաւեն երկաթուղային գիծը Սամսրեղի կայարանից մինչև Բաթում։ Մուսուլմանների ապատամբութեան դէպքում միաժամանակ խըզված կը լինի Բալաջարի-Դանձակի մասը։ Կովկասեան քրիստոնեաների վրա այժմ յոյս դնել անկարելի է։ Ռուսաստանի պարտութեան դէպքում հայերը երազում են ինքնուրոյն թագաւորութեան մասին, իսկ վրացիները, խեթիլները, գուրիացիները՝ ինքնավար սօցիալ-դեմօկրատական հանրապետութեան մասին։

Ապա ակնարկելով, որ Փոխարքայի «բարեացակամ» իշխանութեան ժամանակ կովկասեան յեղափոխութիւնը ոչ միայն չը դադարեց, այլ և աւելի ամուր արմատներ ձգեց, մի ինչ-որ կովկասեան գեներալի բերանով յարձակվելով Կովկասի բարձր իշխանութեան և, գլխաւորապէս, դաշնակցականների բռնած ընթացքի վրա 1905 թւի աղատութեան օրերում, ասում է.

Նրա (Փոխարքայի) քաղաքականութիւնը, գեներալ Գրեաղնովի սպանութիւնից յետոյ, ընկաւ նրա պաշտօնական խորհրդատուների, ինչպէս բարի, բայց կարճատես Կրիմ-Դիրէյի, կամ յայտնի սօցիալ-նահանգալ. Ստարօսելսկու և այն ժամանակ ամենակարող Դաշնակցութեան ոչ պաշտօնական գաղտնի ձեռքերի մէջ։

Կովկասը, Ռուսաստանի ամենաթանգագին արժատներից մէկը, ընկնում է նրա թագից։ Կովկասը աւերվում է. նա ապստամբութեան նախօրեակումն է, գուցէ նոյն իսկ պատերազմի նախօրեակում։ Հետաքրքրական է իմանալ թէ՝ ում ձեռքում են գտնվում մեր ռազմական գծերը և սահմանային ամրութիւնները։

Այնուհետև մի առ մի թուելով, որ այդ երկաթուղային գծերը գտնվում են խառն ազգութիւնների պատկանող կառավարիչների ձեռքում, իսկ Երևանի բերդը, որ առաջինը պիտի կրէ թշնամու գրոհը, յանձնված է գեներալ Գրամատչիկին, կծու հեգնութեամբ վերջացնում է.

Ինչպէս տեսնում էք, ռազմական գծերը, մի այնպիսի սքանչելի տեղում, ինչպիսին է Կովկասը, ուր մէկ-երկու կամուրջների փչանալը կարող է ընդհատել հաղորդակցութիւնը,—պետական իշխանութեամբ յանձնված է միանգամայն յուսալի մարդկանց...

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նիժ, 18 մարտի

Ամսիս 11-ին տեղս ժամանեց նոր նշանակված Նուխու գաւառապետ Ահմադ բէկը։ Սա, գալով տեղս, ինչպէս պօստի դիմաց՝ ստրաժնիկների կացարանի բակը։ Ներկայ էին ժողովրդից աւելի քան հարիւր հոգի, որոնք զանգաւածեցին, որ «սոված են, հաց չունեն, ժողովուրդը սովի դռան է մատնվել, թողչին շատ է»։ Գաւառապետը խոստացաւ կարգադրութիւն անել։ Տանուտէր իւզբաշի Ս. Նասիբեանի դէմ բողոքներ եղան, որին գաւառապետը պատասխանեց. «Նրան վաղուց եմ ճանաչում և շղթայով կը խեղդեմ»։ Թուրք ներկայացուցիչներից մէկը ասաց, թէ «հայերը պատրաստվում են մեզ կոտորելու»։ Գաւառապետը հանգստացրեց բոլորին և վերջացրեց. «Բոլոր հպատակները ինձ համար մէկ են, կուզէ թուրք լինի, կուզէ հայ... ես բոլորին նայում եմ հաւասար աչքով»։ Այդ խօսքերը լսելով, ժողովուրդը ցրվեց գոհ սրտով։

Ծիրիկ, Սօղութլու, Թօսիկ, Թօշկաշէն և Եաղուբլու հայ գիւղերը սովի ճանկում տառապում են։ Ես ականատես եղայ մի սօղութլուցի գիւղացու, որը երկու կտոր հաց Նիժից վերցրեց ու վազելով գնաց ազատելու սովի ճիրաններից երեխաներին։ Սովամահութեան դէպքեր են տեղի ունեցել։ Հիւանդութիւնը տարածվել է և զոհ-զոհի ետևից հնձում է թէ մեծին և թէ փոքրին... Նիժին կցած թուրքական Աբդաշլու գիւղը մի խնդրով դիմելու է կառավարութեան։

Կէտ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Նիստ մարտի 31-ի

Նիստը բացվում է ժամը 11 և 14 րոպէին։ Նախագահում է Մօմեակովը։ Կարդացվում է օրակարգը։

Մինիստրների օթեակումն է ժողովրդական լուսաւորութեան մինիստրը։

Դուման ձեռնարկում է քննելու յօդուածայօդուած այն օրինագիծը, որով պետական գանձարանից պահանջվում է 1,400,000 ռուբլի՝ տարրական կրթութեան ընդհանուր պէտքերի համար, և 5,500,777 ռուբլի՝ ժողովրդական կրթութեան կարիքների համար ընդհանուր ժողովրդական ուսուցման նպատակով։

Օրինագծի 7 յօդուածների վերաբերութեամբ առաջարկված են 21 ուղղումներ։ Այդ ուղղումների առիթով խօսում են Կոլիւբակին, հայր Գեպեցկի, Ռումեանցեվ, Սաֆոնով, Բէլոուսով, Բոգդէվ, Եալոգի և պիսկոպոսը, Մարկով II, Տիչինին, Մալէնկիով և ժամանակի զեկուցանող Կովալէվսկի։

Ընդունվում են միայն չորրորդ և տասներորդ յօդուածների համար Գեպեցկու ուղղումը, այսինքն նպաստ տրվի ոչ միայն զէմստվոներին և քաղաքային ինքնավար մարմիններին, որոնք պարտաւորվում են պետական նպաստներ ստանալու պատճառով բաց մնացող գումարները շարունակ ծախսել սկզբնական դպրոցների պահպանութեան, ուսանողներին ոռճիկներ տալու, ժողովրդական կրթութեան զանազան կարիքների և շինարարական պէտքերի համար։

Ընդունվում է Տիչինինի առաջարկութիւնը՝ 6-րդ յօդուածը ձևակերպել այսպէս. «5,500,000 ռուբլուց մնացորդ գումարները գործադրվում են իբրև նպաստ դպրոցական շէնքերի շինութեան միանուագ ծախքերի և դպրոցների կարգաւորման համար»։

Մնացած բոլոր ուղղումները մերժվում են։ Օրինագծի յօդուածաբար առաջին ընթերցումը վերջացած է։

Ժամը 1 և 40 րոպէին յայտարարվում է ընդմիջում մի ժամով։

Նիստը վերսկսվում է ժ. 2 և 25 րոպէին։ Հերթական է համարվում և առանց վիճաբանութիւնների խմբագրական ժամանակողովին է յանձնվում այն օրինագիծը, որով առաջարկվում է 1908 թւի ընթացքում ևս երկարել ֆինանսների մինիստրին տրված այն լիազօրութիւնները, որոնք վերաբերում են հողային հարկի 10%-ային տուրք նշանակելուն Թիւրքեստանի անմշակ հողերի համար։

Հերթում դրված է կրկին ամուրեան երկաթուղու օրինագիծը։

Մինիստրների օթեակումն են ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը և զինուորական մինիստրի օգնականը։

Նախագահի աթոռը գրաւում է իշխ. Զօլոտնիցկին։ Խօսելու են դեռ 72 հոգեւորներ։

Բոդիչեվը ընդդիմում է, որ Պետական Դումային չէ ներկայացված մինչև անգամ երկաթուղագծի արժէքի հաշիւը. այդ գիծը պետութեանը կը նստէ ոչ թէ 215,000,000 ռուբլի, այլ աւելի. չէ ներկայացված և երկրի պատկերագիրը, մինչդեռ այդօրինակ նկարագրութեան համար բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները գտնվում են զանազան հետազօտութիւնների մէջ։ Սակայն այդ տեղեկութիւնները, հոեսորի կարծիքով, խօսում են ոչ յօգուտ գծի. այդ երկիրը կուլտուրայի այժմեան պայմաններում չէ կարող մարդաբնակ դառնալ. երկրի գաղթավայրութեան արգելարգիթ է հանդիսանում գաղթականների անկուլտուրականութիւնը, որոնք իրանց հետ առնում են այդ օրդրը համար անպէտք ու իրանց նախահայրերից՝ ժառանգած հողը մշակելու եղանակներն ու ձևերը. արգելք են նաև իրաւական պայմանները, որոնցով տեղական կեանքի իրաքանչիւր հարցը կարող է լուծում ստանալ ոչ այլ կերպ, բայց եթէ Պետերբուրգում։ Տեղական իրաքանչիւր ձեռնարկութեան ոգին այդպիսով սպանվում է։ Տեղական ազգաբնակութիւնը բաղկացած է առաւելապէս այն անձերից, որոնք ապրում են պետական նպաստներով։ Գաղթական պլան շրջանում չը կայ, չը կայ նաև երկրի առաջիկայ գործունէութեան պլանը։ Չէ կարելի յորդոր կարդալ զոհողութիւններ անելու, ցոյց չը տալով այդ զոհողութեան շարժառիթները, չէ կարելի յորդոր կարդալ զոհաբերութիւններ անելու, որոնց կատարելով ժողովուրդը չը գիտէ՝ ինչի համար և ինչու է զոհաբերութիւն անում։ Բացի երկաթուղագծի արժէքից, հարկ կը լինի ամեն տարի պետական գանձարանից 30 միլիոն լաւելեալ գումար բաց թողնել, մինչ իւրաքանչիւր լուսաւորչական կամ կուլտուրական ձեռնարկութիւն կանգ է առնում պետական գանձատան սուղ դրութեան պատճառով։

Մինիստրների օթեակում տեղ են գրաւում մինիստրների խորհրդի նախագահը և ֆինանսների մինիստրը։

Հոեսորի կարծիքով, երկաթուղագիծը գաղթականական նշանակութիւն չի ունենայ. գծի ռազմական նշանակութիւնը կայանում է պատերազմական ժամանակ սոսկ զօրքեր հասցնելու մէջ։ «Եապօնիայի հետ պատերազմ ծագած ժամանակ, Եապօնիան կարող է զօրք հասցնել միայն ծովից, հետևաբար հարկաւոր է ամրացնել Վլադիվոստոկը, որ պաշտպանում է ծովափնեայ շրջանը։

«Բնական ամրութիւններով Վլադիվոստոկը ամրացնելու միտքը արհամարհելու ստիպող պետական խելացիութիւնը միևնոյն այն պետական խելացիութիւնն է, որ մեր եղբայրներին թաղեց Մուկդէնի և Ցուսիմայի ծոցերը (ծափահարութիւն ձախակողմում. աջակողմը ազմկում է)։ Չը պէտք է անպատճառ ռազմագէտ լինել՝ հասկանալու այն ճշմարտութիւնը, որ չէ կարելի 1500 վերստ տարածութեամբ ճանապարհ անցկացնել մինչև թշնամու երկիրը, հնարաւորութիւն չունենալով պաշտպանել նրան։ Ժամանակակից պատերազմը հիմնվում է ոչ միայն զօրքի քաջութեան վրա. այժմեան պատերազմները ժողովրդական պատերազմներ են. միայն երկրի բոլոր բնակիչների աշխատակցելը կարող է ապահովել յաղթութիւնը, միայն ժողովրդական տրամադրութիւնը, ժողովրդական հաւատքը կարող է աջողութեան գրաւական ծառայել։

«Ամուրեան երկաթուղագծից աւելի կարևորը Հեռաւոր Արևելքի այն քաղաքականութիւնն է, որպիսին արդար ու ճշմարիտ ճանաչվեր հարեան ժողովուրդների գիտակցութեան մէջ, որպիսին հասկանալի դառնար ռուս ժողովրդին, որպիսին հաւատատասխաներ ռուսաց պետութեան արժանապատուութեանը։ Այդ քաղաքականութիւնը պարփակվում է ագրեսիվ աւանտիւրներից հրաժարվելու և ներքին բարենորոգումներ մտցնելու մէջ։ Այդ ճանապարհով դուք կը հասնէք նիւթական և մօրալ աջողութեան։

«Ես կը ցանկանայի, որ ռուս ժողովուրդը հաւատվէ, որ իր բաղդը վճռում է այն ձայնը, որ բղխում է իր միջավայրից, և ոչ այն գաղտագողի ձայները, որ հնչում են Արևմուտքից (ծափահարութիւն ձախակողմում)։

«Հեռ. Արևելքում պէտք է վարէք պաշտպանողական, մնտեսական առաջխաղացման քաղաքականութիւն։ Այդ տեսակէտից գիծը բացասական նշանակութիւն ունի։ Չէ կարելի յենվել այն պատճառաբանութեանց վրա, թէ հարկաւոր է կամ երկաթուղի կամ նաւատորմ. եթէ նաւատորմ հարկաւոր է, այդ կարելի է ստեղծել և երկաթուղու ժամանակ։ Չէ կարելի երկաթուղին անցկացնել անապատի միջով։ Ասում են, որ այդպէս է երկաթուղի շինում Ամերիկան. սակայն նա այդ երկաթուղիները կառուցանում է այլ պայմաններում։ Ամերիկան երբէք հրէաներին չէ արտաքսել (ծիծաղ, աղմուկ աջակողմում)։ Մի ծիծաղէք պարոններ, ժողովրդական ներկայացուցչութեան վրա ծիծաղելու համար,—ասում է պատմութիւնը,—յաճախ երկիրը վարձատրվել է կատաստրոֆայով։ Յիշեցէք Տիէրին։ Դուք այժմ կանգնած էք պատմական ձայնատուութեան առաջ։ Երկաթուղին պէտք է կառուցանվի այն ժամանակ, երբ երկիրը մարդաբնակ կը դառնայ. երկաթուղին կը կառուցվի այն ժամանակ իրանք գաղթականները. երկաթուղին կը կառուցվի ուրիշ կողմից, ոչ թէ արևմտեան կողմից, այլ արևելքից։ Յօգուտ մեզ առաջարկվող երկաթուղագծի կարելի է ձայն տալ միայն այն լիակատար գիտակցութեամբ, թէ այլ կերպ վարվել անկարելի է։

«Որպէսզի պատասխանատու չը լինէք ձեր ընտրողների առաջ, դուք պէտք է պարզէք նրանց այն բոլոր հիմունքները, որոնք խորտակեցին ձեր կամքը և ստիպեցին ձեզ ասել, որ ռուս ժողովրդի կեանքն ու արիւնը պէտք է գործադրվեն ոչ ներսում, ոչ Ռուսաստանում, որը կարող է կրկին քաղցել, որ պէտք է ապրել ոչ Ռուսաստանում, [illegible] ՀՂՈՐԴ անկերթ Ցալ, ոչ Ռուսաստանում, որը կարող է հօլա գնալ առանց իրաւական կարգ ու կանոնի, այլ Մանջուրիայի անապատներում։ Երբ դուք հնարաւորութիւն կունենաք ասել այդ, քուէարկեցէք յօգուտ երկաթուղագծի, և ես կը քուէարկեմ ձեզ հետ միասին։ Իսկ երբ այդ չը կայ, հարկաւոր է յիշել, որ յաղթանակել հարկաւոր է ոչ այժմ, այլ այն ժամանակ, երբ կը հասնէ այդ քուէարկութեան հատուցման ժամանակը...» (ծափահարութիւն ձախակողմում, սուլոց աջակողմում)։

Սինիստրների խորհրդի նախագահը մի բաւական երկար ճառով *) ապարդէլ է գալիս ի պաշտպանութիւն ամուրեան երկաթուղագծի կառուցման։

Մինիստր. խորհ. նախագահի ճառից յետոյ, ժամը 4 և 15 րոպէին յայտարարվում է միջարար կէս ժամով։

Նիստը վերսկսվում է ժամը 4 և 50 րոպէին։ Որոշվում է այսօր և վաղը նշանակել երեկոյեան նիստեր, սկսած երեկ. ժամը 8½-ից, ամուրեան երկաթուղու օրինագծի շուրջը ծագած վիճաբանութիւնները աւարտելու համար։

Կապուստինը երկաթուղու կառուցումը համարում է անպայման անհրաժեշտ։ «Միրբերի ներկայացուցիչը վկայեց այդ երկաթուղու կառուցման անհրաժեշտութիւնը տեղական ազգաբնակութեան տեսակէտից. գիծը անհրաժեշտ է և ռազմական տեսակէտից, որովհետև առանց նրան՝ Հեռաւոր Արևելքը կարող է անջատվել։ Գաղթականութեան տեսակէտից մենք պարտաւոր ենք պաշտպանել մեր ռահվիրաներին, որոնք այնտեղ պետական մեծ գործ—գաղթականան և պաշտպանողական գործ են կատարում։ Ծայրագաւառներում պէտք է գիտանան, որ նրանք մոռացված չեն, որ նրանք կազմում են մայր Ռուսաստանի մասերը։ Եթէ այդ զգացմունքը զարգացած լինէր ծայրագաւառների բնակիչների մէջ մինչև պատերազմը, այն ժամանակ թերևս պատերազմի հետևանքը այլ լինէր։ Սակայն այդ ծանր փորձութիւնը մենք տարանք. այժմ մենք ունենք վերափոխված կազմ, և, որ ամենից կարևորն է, մեզ մոտ զարթնեց այն զգացմունքը, թէ Ռուսաստանը մի և հզօր ապրել է և պէտք է ապրէ այդպէս»։

Մարկով II-ը նկատում է, որ չը պատկանելով Դումայի այն անդամների թւին, որոնք ընտրվել են ոչ իրանց ազգաբնակութիւնից, այլ Դումա են մտել ուրիշ քաղաքներից քաղաքական կուսակցութիւնների որոշմամբ, նա հաշիւ կը տայ իր ընտրողների ամենալայն խաւերում անդամ, առանց սեռը նկատի առնելու, մինչև Զատիկը։

Մանրամասն կանգ առնելով Պրիամուրի տեղական հարստութիւնների հարցը պարզելու և գաղթականութեան կարիքների վրա, հեռաւորը այն եզրակացութեանն է գալիս, որ ամուրեան երկաթուղագիծը անպայման անհրաժեշտ է։ «Երկաթուղու կառուցումը կը տայ ամենաքիչը հարիւր միլիոն դեսեատին մշակելու համար պիտանի հող։ Այդ գծի համար ծախսած իւրաքանչիւր ռուբլին կը ստացվի տոկոսով։

«Չը պէտք է մոռանալ, որ 50 տարուց յետոյ Ռուսաստանը կունենայ 300 միլիոնից աւելի ազգաբնակութիւն։ 150 միլիոն մարդիկ այդ ժամանակի ընթացքում նոր հող կը պահանջեն։ Դուք կամենում էք նրանց սփոփել նրանով, որ կալուածատէրերի մօտ 25 միլիոն դեսեատին կայ։ Պարոններ, մտածեցէք, չէ՞ որ բացի սօցիալիզմից կայ և թիւրանութիւն (ծիծաղ, ծափահարութիւն)։ Ցանուն պետական լայն նպատակների, յանուն հանուր ժողովրդի բարեքի հասկացողութեան, յանուն իսկական անկեղծ պատասխանատուութեան հասկացողութեան ոչ միայն ժամանակակիցների, ոչ միայն ընտրողների, այլ յանուն պատասխանատուութեան ձեր սերնդի, ժողովրդի առաջ, դուք պէտք է պաշտպանէք ռուսաց երկիրը, դուք, սօցիալիստներդ, հանրապետականներդ, աջակողմեաններդ, միապետականներդ, բոլորդ. որովհետև, եթէ չը պաշտպանէք ռուսաց երկիրը, ապագայ սերունդը ձեզ չի ների, դուք չէք արդա-

*) Այս ճառը մենք կը տանք առանձին։

ղացնի ոչ մի սոցիալիզմ, դուք յանցաւորներ կը լինէք ձեր սեփական զաւակների առաջ (աղաղակներ «բրաւօ»)։

«Միանգամայն տեղին մեզ յիշեցրին այսօր, որ ռուսաց դրօշակը արծիւ է։ Այո, պարոններ, արծիւ, ոչ թէ վախկոտ ագռաւ։ Ռուս դիւցազնը սովոր է քնել. դա մեր ազգային մեղքն է։ Մենք չա՞տ երկար քնեցինք, բայց այժմ քնելը յանցանք է»։

Հեռանալով ամբիոնից, հռետորը կոչ է անում չանսալ ի ծնէ կոյր թէօրետիկներին, լրտեսներին, այլ լսելով ռուս ժողովրդի հզօրութեան և մեծութեան, նրա ստեղծագործիչ ոյժին, յանուն ընդարձակ Ռուսաստանի ձայն տալ յօգուտ ամուրեան երկաթուղագծի և ապացուցանել, որ Ցարի հլու հպատակներ են և գնում են ռուսաց արծիւի ետևից, և ոչ թէ վախկոտ ագռաւի...

Ժամը 5 և 57 րօպէին յայտարարվում է միջարար մինչև երեկոյ։

Նիստը վերսկվում է ժամը 8 և 57 րօպէին։ Նախագահում է իշխան Վօլկօնսկին։

Բօբեանսկին ամուրեան երկաթուղու հարցը նախալուծված համարելով մինչև Դումայի գումարելը՝ բայց և այնպէս իրան պարտաւոր է համարում կանգ առնել գլխաւորապէս երկաթուղու ռազմական նշանակութեան վրա։

Վերջում հռետորը խոստովանում է, որ Հեռաւոր Արևելքում դերակշռող դիրք ձեռք բերելու համար անհրաժեշտ է ռուսներին ամէն բանով վերափոխվել և կիսակուլտուրականութիւնից լիակատար կուլտուրական եւրօպացիներ դառնալ (ծափահարում է ձախակողմը, սուլում է աջակողմը)։

Նիկոլայ Լվովը գտնում է, որ միայն տեղեկութիւնների պակասաւորութիւնը խճդում է առանց այն էլ բարդ հարցը։ Ամուրեան երկաթուղու ծախքը գաղթականութեանը բնաւ նպատակ չի լինի։ Գաղթականութեան համար կայ արևելեան-չինական երկաթուղին։ «Եթէ դուք այդ 359 միլիօնը ծախսէք գաղթականութեան գործի վրա, յիրաւի, դուք աւելի շատ նպատակ կը լինի գաղթավայրեր հիմնելու գործին, որը անկասկած պետական առաջնակարգ նշանակութիւն ունի, որովհետև, ինչպէս արդարացի նկատեց մինիստրների խորհրդի նախագահը, օտարազգիները իսկապէս սկսում են մուտք գործել այդ երկրի կեանքը, և յաղթութիւնը նրան կը մնայ, ով փառքով դուրս կը գայ այդ մրցութիւնից։

«Ռազմական տեսակէտից ակներև է, որ գիծը աւարտվելու է չորս տարում, սակայն ինչպէս կը հասնէք դուք դրան, երբ այդ երկաթուղու կառուցման աշխատանքը սահմանափակում էք լոկ ռուս բանւորների ջանքով։ Այլ բան է Սիբիրի երկաթուղին. դրանով դուք ամրացնում էք ձեր ոյժը. իսկ դրանից այն կողմը արդէն ոչ թէ ամրացնում էք, այլ ձեր ոյժը լուծում, քայքայում էք։ Կենտրօնացնելով մեր ուշադրութիւնը Հեռաւոր Արևելքում, մենք քարձի-թողի ենք անում մեր վերին ասիական կենսունակ շահերը Արևմուտքում» (ծափահարութիւններ)։

Բօգանօվ թէև հարցը նախորոշված է համարում, բայց յայտնում է, որ աշխատաւորականները դէմ են ամուրեան երկաթուղու կառուցմանն։ Հռետորը մանրամասն կանգ է առնում, քաղելով զանազան աղբիւրներից, ռուսական պարտութիւնների պատճառների վրա վերջին պատերազմում։

«Ընդունելով, որ ամուրեան երկաթուղին անօգուտ է, երբ չէ փոխվել զօրքում պարտականութեան զգացմունքը...»։

Նախագահը կանգնեցնում է հռետորին, խնդրելով նրան չը շօշափել ռուսաց զօրքի պարտքի զգացմունքը։

Բօգանովը շարունակում է խօսել զօրքի մասին։

Նախագահը դարձեալ կրկնակի կանգնեցնում է հռետորին, խնդրելով խօսել ամուրեան երկաթուղու, և ոչ թէ զօրքի մասին։

Բօգանովը բողոքում է, որ թոյլ չեն տալիս նրան ազատօրէն իր կարծիքները արտայայտելու։

Ձայներ կենտրօնում և աջակողմում՝ «Գործին, գործին անցիր»։

Բօգանովը իր ճառը վերջացնում է, ասելով որ ամենից կարևորը ագրարային հարցի լուծումն է (ծափահարութիւն ձախակողմում, ծիծաղ և աղմուկ աջակողմում)։

Զիսիձեն կարծում է, որ իւրաքանչիւր երկաթուղի լաւ բան է (ծիծաղ)։ «Երկաթուղին, նպատակում տնտեսական էվոլիւցիային, ստեղծում է իրերի մի այնպիսի դրութիւն, որի ժամանակ ամէն մի նոր վիճած մեխի կտորը դառնում է նոր մեխ՝ (ծափահարութիւն ձախակողմում, ծիծաղ աջակողմում)։

«Պրիամուրի մասին Դումայի ունեցած տեղեկութիւնները յիշեցնում են Հերոդոտի հեքիաթները (ծիծաղ), այնքան այդ տեղեկութիւնները անհաւանական են։ Երկաթուղու պաշտպաններն ասում են, որ Պրիամուրն այնպիսի ոսկեայ յատակ է, որ գիծը կառուցանել անհրաժեշտ է, որովհետև ձիերով այնտեղի ոսկիները դուրս հանել չէ կարելի... (ծիծաղ)։ Երկաթուղու պաշտպանները պնդում են, որ Պրիամուրում բազմանում են նոյնիսկ վայրենի մեղուներ (ծիծաղ)։ Երկաթուղու պաշտպանները վկայում են, որ այնտեղ հաւերը բազմանում են առանց ձուների (հրճուանք)։

«Երկաթուղին միայն այն ժամանակ կարելի էր կառուցանել, երբ կարիքի դէպքում նրա պաշտպանութեան համար ոտքի կանգնէր ամբողջ ժողովուրդը, բայց դրա համար անհրաժեշտ է, որպէսզի ժողովուրդը կապված լինի այդ երկաթուղու հետ արիւնակցական կապերով։ Գործում այդ բանը չը կայ. երկաթուղու խնդրում շահագրգռված են միայն հասարակական մի քանի խմբակները (ծափահարութիւն ձախակողմում)։

«Բնորոշ է ռուս բանւորների համար ունեցած հոգատարութիւնը, սակայն չէ՞ որ աշխատանքները յանձնվելու են կապալառուների. հետևաբար, փողերը կը մնան ոչ թէ ռուս բանւորների ձեռքում, այլ ռուս կապալառուների ձեռքում (ծիծաղ)։

«Այդ ձեռնարկութիւնը կաւելացնէ միայն հարկերը և նոր արիւնհեղութիւնների պատճառ կը դառնայ։

«Բայց ինչպէս պահել այդ ծայրերկիրը մեր ձեռքում։ Պետութեան ամբողջութիւնը գուցէ մենք աւելի պակաս չենք գնահատում, քան նրանք, ովքեր այնպէս շատ են գոռում այդ մասին (ծափահարութիւններ)։ Նրա համար, որպէսզի մարդու օրգանիզմը կանոնաւոր գործէ, անհրաժեշտ է, որ նօրմալ գործեն նրա բոլոր մասերը։ Տուէք Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին հնարաւորութիւն միանալու, շաղկապվելու, կազմակերպեցէք ժողովրդական մասսաները և Ռուսաստանի հանուր ազգաբնակութիւնը մի մեծ միակ ընտանիք կը կազմէ. այն ժամանակ նրան ահարկու չեն թուայ ոչ մի եապօնացի, ոչ մի չինացի։ Բանի այդ չը կայ, դուք պէտք է յիշէք, թէ ինչպիսի պարտականութիւն էք վերցնում դուք ձեր վրա, տալով ձեր ողորմած համաձայնութիւնը այդ քայլի համար, որը թերևս նոր կատաստրոֆա առաջ բերէ։ Բանի այդ համաձայնութիւնը չէ տրված, սոցիալ-դեմօկրատները առաջարկում են իրանց բանաձևը, որ ուղղված է օրինագիծը ընդունելու դէմ» (ծափահարում է ձախակողմը, սուլում է աջակողմը)։

Որոշվում է՝ որ մնացած 67 հռետորները 6 հռետոր ընտրեն իրանց միջից, որոնց ճառերից յետոյ վիճաբանութիւնները վերջացած կը համարվեն. քուէարկութեան կը դրվի յօդուածային ընթերցման անցնելու հարցը։

Երեկոյեան ժամը 11 և 50 րօպէին նիստը փակված է։

Հետևեալ նիստը կը կայանայ ապրիլի 1-ին ամուրեան երկաթուղու վիճաբանութիւնները աւարտելու համար։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Շամախու թեմական առաջնորդ Անանիա արքեպիսկոպոս Համազասպեանցը ստացել է Փոխարքայից հետևեալ հեռագիրը. «Շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ, հոգևորականութեանը և ձեր հօտին՝ շնորհաւորութեան զգացմունքներ և բարեմաղթութիւններ արտայայտելու համար»։

✦ Կիրակի օրը, ապրիլի 6-ին, Վանքի աւագ եկեղեցու բակում, հանդուցեալ Աբգար Յովհաննիսեանի գերեզմանի վրա կանգնեցվելու է ժամարձան, որ գնել են հանգուցեալ հրապարակախօսի գործունէութիւնը յարգողների նուէրներով։

✦ Սիմէօն Աֆանասեան յայտնում է մեզ հետևեալը. «Կարդալով «Մշակի» № 72-ում, որ մի օրիորդ կարիք ունի դրամական օգնութեան, որպէսզի կարողանայ իր ուսման թոշակը վճարել, յանձն եմ առնում տալ անհրաժեշտ նպաստը այն գումարից, որ թողել է իմ հանգուցեալ հայրը իմ տրամադրութեան տակ բարեգործական նպատակով։ Գ. Աֆանասեանը յանձնեց քառասուն ռուբլի, որով և բաւարարութիւն տուեց ուսումնատենչ օրիորդի կարիքին։

✦ Մեզ խնդրում են յայտնել, որ վաղը ուրբաթ, ապրիլի 14-ին, Ա. Քալանթար կը կարդայ «Կլիմայաբնակելացման ցուցահանդէսի և հաւաժողովի մասին» մի զեկուցում «Ինութիւն սիրող ընկերութեան» նիստում, որ տեղի կունենայ Թիֆլիսի առաջին գիմնազիայի շինութեան մէջ։ Սկիզբը 7½ ժամին երեկոյեան։

✦ Վաղվանից՝ ապրիլի 4-ից կովկասագիտական բարձր դասընթացքներում (Ալէքսանդրեան այգի) Ի. Նակաշիձէն կը վերսկսէ իր դասախօսութիւնները վրաց նոր գրականութեան մասին։

✦ Ցիշեցնում ենք, որ այսօր, Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում, տեղի է ունենալու Եւրօպայից մեզ մօտ հիւր եկած երիտասարդ ջութակահար Կիւտէնեանի համերգը։ Խորհուրդ ենք տալիս երաժշտասէրներին գնալ այդ երեկոյին և մի երկու ժամ հաճոյք զգալ եւրօպական շքալայով ջութակահարութեան մէջ կատարելագործված երիտասարդի նուագելուց։ Հարկ ենք համարում աւելացնել, որ պ. Կիւտէնեան կունենայ մեզ մօտ միայն մի համերգ։ Այդ համերգին մասնակցելու է նաև օրիորդ Միրիմանեան։

✦ Ցունվար ամսվայ ընթացքում, 1908 թ., անդրկովկասեան երկաթուղիների շահագործութիւնից մաքուր եկամուտ մնացել է 686,400 ռուբլի, անցեալ տարվանից 181, 100 ռուբլով աւելի։

✦ Անդրկովկասի երկաթուղիների ստորին ծառայողներին պարգևներ տալու համար 1906 թ-ին ստացված օգուտից 116,000 ռուբլի է փոխադրված։ Պարգևները կը տրվեն Զատկի մօտերը։

✦ Թիֆլիս կայարանում մի բաղմամարդ աւազակախումբ է կազմվել, որ շարունակ պարապում է կայարան հասած և այնտեղից ուղարկվող ապրանքները գողանալով։ Այդ աւազակախմբի մի մասը, որի մէջ եղել են նաև ծառայողներից մի քանիսը, արդէն ձերբակալված է։ Բայց և այնպէս ապրիլի 1-ին դարձեալ մի խոշոր գողութիւն են երևան հանել. գողացված է 7 արկղ կօշկեղէն և 1 արկղ կրկնակօշկի։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը նոր կանոններ է մշակել, որոնց համաձայն նպաստներ են տրվելու քաղաքային ինքնավարութեան ծառայողների ընտանիքներին։ Նոր կանոններով, որ ներկայացվելու է դումայի ընտրութեան, բաւականաչափ կրճատվում են նպաստների վրա գործադրվող ծախքերը։

✦ Թիֆլիսի 1-ին իգական գիմնազիայում, ինչպէս յայտնի է, բացվել են երկու ազատ տեղեր քաղաքային թոշակաւորների համար։ Ներկայումս այդ տեղերի համար զանազան անձերից ստացվել են մօտ 50 խնդրագրեր։ Խնդրագրերը յանձնված են քաղաքային գործակալներին՝ տեղեկութիւններ ժողովելու համար խնդրատուների ընտանեկան դրութեան և կարողութեան մասին։

✦ 1908 թ. յունվարից մինչև մարտի 30-ը Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ստացել է այսպէս կոչված գնահատման տուրք 149,486 ռ. 74 կ.։ Անցեալ տարի նոյն ժամանակամիջոցում ստացվել է 157,211 ռ. 15 կ.։

✦ Մեզ խնդրում են հրատարակել հետևեալը. «Ինչպէս երևում է, քաղաքային վարչութիւնն ուշադրութիւն չէ դարձնում այն անկուշտ ախորժակի վրա, որ Թիֆլիսի էլեքտրաքարշի անօնիմ ընկերութիւնը ցոյց է տալիս։ Բանն այն է, որ այդ ընկերութիւնը Սօլօլակ-Երևանեան-հրապարակ գծի համար սահմանել է որպէս սակագին 5 կ., մինչդեռ այդ գիծը, ինչպէս յայտնի է, այնքան էլ երկար չէ ինչպէս, օրինակ, Սամանդայա-Օրթաճալա գիծը կամ Վօրոնցով-Երևանեան-ը. գիծը, որոնց իւրաքանչիւրի սակագինն է 3 կ.։ Անհրաժեշտ է, որ քաղ. վարչութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնէ անօնիմ ընկերութեան այդ կամայական ընթացքի վրա, եթէ իսկապէս նրա կոչումն է քաղաքի և քաղաքացիների շահերը պաշտպանել»։

✦ Շարունակ լսվում են, թէ Թիֆլիսի քաղ. վարչ. սանիտարական-բժշկ. ժամանաժողովն այս-ինչ կամ այն-ինչ կարգադրութիւնն է արել քաղաքի բնակիչների առողջութեան համար։ Այն ինչ՝ միւս կողմից բոլորովին անխնամ ու անուշադիր են մնում այնպիսի աչքի ընկնող երևոյթներ, որոնք կարծվում է թէ լուրջ ուշադրութեան պիտի արժանանային։ Բանն այն է, որ Վօրոնցովի հրապարակի և Վելիկօկնեաժսկայա փողոցի անկիւնում գտնվող ժանրավաճառի կրպակի (բուդկա) եռանն այնպիսի զազրելի ու ճեմիշային տեսք է ընդունել, որ առհասարակ անցորդների պրժգանքն է յարուցանում։ Շուտով շոգերը կը սկսվին, և այլևս գրեթէ անկարելի կը լինի այդ կէտով անցնել, որովհետև ճեմիշային անտանելի հոտը չափազանց սուր կերպով կը փչէ այն ժամանակ։ Հարկաւոր է, որ քաղ. վարչութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնէ այդ երևոյթի վրա և այդ կէտում կանգնեցնէ հասարակական ճեմիշ, որը անցեալներում եղել է մինոյն կէտի վրա։ Նոյնպիսի սաստիկ հակառողջական դրութեան մէջ է և Սօլօմոնովսկայա կոչված փողոցը, ուր օդը ուղղակի նեխված է շնորհիւ այն հանգամանքի, որ փողոցի այն ծայրը, որը մօտ է Սօլդատսկի բազարին, վերածված է ուղղակի արտաքնոցի։ Այդ արտաթորութիւնները հոսելով գնում են դէպի Սօլդատսկի բազար և ոռոգում ծախվող բանջարեղէնները։ Անհասկանալի է, թէ ինչու քաղաքային վարչութիւնը, թաղական բժիշկը ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում այս անտանելի դրութեան վրա։

✦ Ստացանք. 1) «Դեղարուեստ» գրական-դեղարուեստական երաժշտական պատկերազարդ հանդէսի (ամսագիր) № 1, որի խմբագիր-հրատարակիչն է Գարեգին Լևոնեան։ Առանձին համարը արժէ 2 ռուբլի։ 2) Ստ. Կանայեանցի «Զոլանց տան Սասմայ ծոռը Դաւիթ և Մհեր» ազգային ժողովրդական վէպի պատմականը։

✦ Պետերբուրգից վերադարձաւ գիւղատնտես Տարասենովը։ Ինչպէս յայտնի է, նա գնացել էր այնտեղ բամբակագործների համագումարին մասնակցելու համար։ Համագումարում ի միջի այլոց քննվել են նաև Կովկասի բամբակագործութեանը վերաբերվող մի քանի հարցեր։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութեան ծառայողներից մի յատուկ մասնաժողով է կազմված, որի վրա յանձնարարութիւն է դրված՝ պարզել Նախալօվկայում քաղաքային բոլոր այն հողերի քանակութիւնը, որոնք գրաւված են զանազան հաստատութիւնների կողմից, ինչպէս և կազմել այն բոլոր պարատէրերի ցուցակը, որոնց պարքի վճարելու ժամանակը լրանում է մայիսի 1-ին, և նրանց վերաբերութեամբ ներկայացնել պահանջ դատարանով։

✦ Այսօր Թիֆլիսում լոյս տեսաւ վրացերէն լեզուով մի ամենօրեայ լրագիր «Մերցխալի» (Ծիծեռնակ) անունով։ Այս լրագիրը դադարած «Ազրի» լրագրի տեղն է։

✦ Մինչև օրս քաղաքական բոլոր կին յանցաւորները պահվում էին նահանգական բանտում։ Այժմ կարգադրված է, որ այդ բանտարկեալուհիներին տեղափոխեն Մետեխի բանտը և այսուհետև այդպիսիներին պահել կրկին Մետեխի բանտում։

✦ Մարտի 31-ին Բաթումում ծեծել են տեղական արական գիմնազիայի ուսուցչին։

✦ Ապրիլի 1-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Թիֆլիսում, Բեմօնտի փողոցում, 65-ամեայ Եղօկիա Ստեպինկօն փակվելով նրկուղում, կախել է իրան։ Դիակը ուղարկված է Մելքայելեան հիւանդանոցը։

✦ Ապրիլի 1-ին, առ. ժամը 8-ին, Թիֆլիսում, Զօկզալնի փողոցում, № 3 տան բակն են մտնում անչափահասներ Վիլէլմ Մաէր և Ալէքսանդր Պխակաձէ վերջինս իր մօտ ունենում է «բուլդօկ» սիստեմի ատրճանակ։ Ցանկանալով ցոյց տալ ատրճանակը Մաէրին, Պխակաձէն կրակում է յանկարծակի մի անգամ և վիրաւորում է Մաէրին։ Վիրաւորվածին տանում են հիւանդանոց, իսկ Պխակաձէին ձերբակալում։

✦ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ (№ 73) համարում կաթողիկոսական խորհրդակցութեան նիստի նկարագրութեան մէջ մի սխալ է սպրդել. երկրորդ ճառախօսի անունը ոչ թէ Նազարեթեան է, այլ պիտի լինի Ս. Նազարեան։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Ապրիլի 2-ին, առ. ժամը 6 և կէսին, Թիֆլիսում, Կազբէկկի և Ցինէտսկի փողոցների անկիւնում, անյայտ չարագործներ ատրճանակով ծանր վիրաւորեցին ոստիկան Պետրովին մէջքից և գլխից։ Ճանապարհին վիրաւորվածը մեռաւ։

✦ Ապրիլի 1-ին, Վերայի զառիվերում, № 5 տնից, Իդա Լիբէրմանի բնակարանից, նրա բացակայութեան ժամանակ, անյայտ մարդիկ կեղծ բանալիի օգնութեամբ գողացել են 250 ռուբլու զանազան իրեղէններ։ Կասկածով ձերբակալված է դանապան Գասակը։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Դեղարուեստ»—գրական, դեղարուեստական և երաժշտական պատկերազարդ հանդէս։

Ստացանք Գ. Լևոնեանի խմբագրութեամբ հրատարակվող «Դեղարուեստ» ամսագրի առաջին համարը։

Դա մեծադիր՝ 111 երեսից բաղկացած մի գիրք է, գեղեցիկ արտաքինով, բազմաթիւ պատկերներով։

Ամսագիրը պարունակում է իր մէջ մի շարք յօդուածներ վերաբերեալ գեղարուեստի նշանակութեան, որոնց մէջ բացատրվում է գեղեցիկի էութիւնը և կատարելիք դերը հասարակական կեանքի զարգացման գործում։

Առաջին համարի մէջ տեղ են գտել երաժշտութեան, նկարչութեան, թատրօնի, բանաստեղծութեան, գեղասանական արհեստի մասին նկատողութիւններ, այլ և վիպական գրուածքներ, ոտանաւորներ, նամակներ և քննադատականներ։

Գրքոյկի վերջում զետեղված են նօտագրված մի քանի երգեր և նկարչական ստեղծագործութիւնների գունաւոր արտատիպներ։

Հրատարակութեան շքեղութեան դիմաց գինը թանգ չէ. տարեկան տասը դրքի համար տասը ռուբլի։

Գրքոյկի շապիկը պատրաստված է հաստ գունաւոր թղթից, որի վրա դրոշմված է ամսագրի անունը գեղեցիկ կերպով։

Առաջին համարի յօդուածների մեծագոյն մասը կրում է ընդհանուր ակնարկների և համառօտ տեսութիւնների բնաւորութիւն։

Գրքոյկը ընդհանրապէս թողնում է նպաստաւոր տպաւորութիւն։

Ա. Բ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, 29 մարտի

Աչքի առաջ ունենալով այն մեծ կարօտութիւնը, որ նկատվում է ներկայումս ամենուրեք, և թշուառ սովեալներին օգնութեան հասնելու կոչերը, մենք մեր անմոռանալի և թանգագին մօր՝ Շողակաթ Յարութիւնեան Տէր-Մարգարեանցի մահվան տարեթով սև հագնելը համարելով լոկ ձևականութիւն, աւելի նպատակայարմար ենք համարում դրա ընդեր գումարը՝ 15 ռուբլի ուղարկել յարգելի խմբագրութեանդ, խնդրելով յատկացնել նրան ամենակարևոր թշուառներին, առանց ազգի և կրօնի խտրութեան։

Հ. Սիլախտարեան
Ա. Բախչինեան
Վ. Ցովանց

—

Թիֆլիս, 2 ապրիլի

Ձեր թերթի նախընթաց օրվայ համարում ազգագրական ընկերութեան ընդհանուր ժողովի նկարագրութեան մէջ թերի է թողնված հետևեալը, որի լրացնելու պարտքը, որպէս նոյն այդ ժողովի քարտուղարի, ինձ է պատկանում։

Նախ՝ խմբագրական մասնաժողովի անդամ ընտրվածների թւում պէտք է աւելացնել և պ. Ս. Բալաղեանի անունը, որ երեւի մոռացմամբ բաց է թողնված։ Երկրորդ՝ պրոֆ. Մարրին ընկերութ. պատուաւոր անդամ ընտրելու միտքը ոչ թէ այդ օրն է ծագել, այլ այդ մասին առաջուց երկար խորհրդակցութիւն է ունեցել խորհուրդը և, իր կողմից դրական որոշումի յանգելով, յանձնարարել է պ. Ե. Լալայեանին զեկուցել ընդհ. ժողովին, ինչպէս որ եղաւ և ինչպէս որ այդ երևում է օրաթերթում նախապէս յայտարարված օրակարգի հարցերի ցանկից։

Գ. Լևոնեան

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ՄԱՔՍ ՎԻԼՀԵԼՄ ՎՈՒՆԴ *)

—

Վերոյիշեալ ընորոշումը, կարծեմ, թոյլ կը տայ եզրակացնելու, որ Վունդի դէմքը իբրև փիլիսօփայի լրիւ պարզելու համար հատորներ գրել է հարկաւոր, ուստի և այս յօդուածը կոչված կարող է լինել միմիայն մի ժամաւոր զաղափար կազմելուն օգնել և որի մէջ չեն կարող այն բոլոր հարցերի և գիտութիւնների մասին խօսք լինել, որոնց վրա Վունդը երկար տարիներ աշխատել է, այլ միայն մի քանի խնդիրներ այստեղ յիշվել կարող են։ Եթէ մեր կեանքը նոյնիսկ Վունդի կարիկատուրան ստեղծած լինէր մինչև օրս, գուցէ այդ կարիկատուրային մատնացոյց անելով ընթերցողի մէջ կարելի լինէր ժամաւորապէս Վունդի գիտական պատկերը վերարտադրել. բայց ափսոս, մենք դուրկ ենք նոյն իսկ այդպիսի աղաւաղված կարիկատուրաներից։ Տաղանդ և հանճար խօսքերն էլ գործածելը շատ չի օգնի, քանի որ մեզ մօտ այդ բառերը համ ու հոտից ընկել են տեղի ու անտեղի գործածութեան պատճառով։

Փորձենք հարևանցի խօսել այն մի քանի խնդիրների մասին, որոնցով Վունդը յատկապէս աչքի է ընկած գիտութեան աշխարհում։ Նախ պէտք է խօսել Վունդի հոգեբանութեան մասին, քանի որ նա այդ ճիւղում առաջացրած նոր ուղղութեան պատճառով առանձնապէս յայտնի է դարձած գիտնական աշխարհում։ Հոգեբանութիւնը այն գիտութիւնն է, որը զբաղվում է հոգեկան կեանքի ուսումնասիրութեամբ. իսկ ինչպէս ամէն մի գիտութիւն, նոյնպէս և հոգեբանութիւնը իր նիւթը ժամկելու համար պէտք է ունենայ որոշ մեթոդներ։ Հոգեկան կեանքը մեզ տրված է իբրև անմիջական իրողութիւն, որի տարրերը մենք միշտ զգում ենք. ուրեմն այդ երևոյթները քննելու համար ուսումնասիրութեան ամենայարմար մեթոդը պէտք է նկատվէր ինքնաքննութիւնը, այսինքն առանձին ուշադրութեամբ հետևել մեր հոգու մէջ տեղի ունեցող երևոյթներին, ըմբռնել նրանց խարակտերները և կապակցութեան օրէնքները։ Սա ինքն ըստ ինքեան մի բնական և հիմնական մեթոդ է, որը անցեալներից սկսված մինչև այժմ գործադրվել և գործադրվում է, սակայն սա միակը չէ. սրան կարող են լրացնել ուսումնասիրութեան և այլ մեթոդներ. և դա է նախ էքսպերիմենտալ մեթոդը։ Առաջին հայեացքից տարօրինակ կը թուայ—մի՞թէ հոգու վերաբերեալ ևս փորձեր կարելի է անել. մի՞թէ կարելի է մեր գիտակցութեան մէջ ապրող երևոյթների մի կտորը հանել և գործիքի տակ դնել և քննել, ինչպէս բնութեան առարկաները։ Ի հարկէ ոչ. սակայն հարցը այստեղ այլ է։ Բոլորին յայտնի իրողութիւն է, որ հոգեկան կեանքը անմիջականօրէն կախված է մարմնական երևոյթներից և որ այս վերջինները ըստ իրանց բնաւորութեան տարբեր հետևանքներ են առաջացնում հոգեկան կեանքում, որ հոգեկան կեանքը իր նիւթը ստանում է դրսի երևոյթներից, և ահա այս կապը մեզ կարելիութիւն է տալիս էքսպերիմենտը (փորձը) գործադրել և հոգեկան կեանքի վերաբերեալ. և մինչև այսօրվայ հետազօտութիւնները ցոյց են տուել, որ այս մեթոդը վերին աստիճանի պտղաբեր կարող է լինել գիտական ուսումնասիրութիւնների վրա։ Փորձի միջոցով կարելի է օրէնքներ հանել մեր զգացումների, կամքի, մտապատկերների կապակցութիւնների, տրամադրութիւնների և այլ երևոյթների վերաբերեալ, և քանի որ այդ օրէնքները հիմնված են զուտ փորձերի վրա, ուստի և դրանց գիտական արժէքաւորութիւնը աւելի է բարձրանում։ Վունդը առաջին անգամ հոգեբանութիւնը միանգամայն գիտական հիմքերի վրա դրեց և իր երկար տարիների ժրաջան աշխատանքի արդիւնքներով այդ գիտութիւնը դրեց էկզակտ գիտութիւնների շարքում։ Առաջին հոգեբանական լաբօրատօրիան նա հիմնեց Լայպցիգում, որին հետևեցին բազմաթիւ համալսարաններ, և շատ հաւանական է, որ մօտիկ ապագայում բոլոր համալսարաններում Վունդի մեթոդը իշխող դառնայ։ Թէ Վունդի այս ուսումնասիրութիւնները որքան պտղաբեր եղան մանկավարժութեան համար, դրան ապագայում կը դառնանք, երբ խօսելու լինենք մանկավարժական մի նոր ուղղութեան—փորձնական մանկավարժութեան մասին։

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՊՕՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ

Նոր դաւադրութիւն Պortուգալիայում.—Լիսաբօնի «Mundo» և «Epoca» լրագիրները հաղորդում են միաժամանակ հետևեալ դէպքի մասին, որի արժանահաւատ լինելը, է

*) Տես «Մշակ» №№ 63 և 64.

հարկէ, մնում է նրանց պատասխանատուութեան վրա։

Ուրբաթ օրը Մանուէլ թագաւորի առաւօտեան սովորական զբօսանքի ժամանակ Նէֆէսխաղէս պալատի այգում, թագաւորն ուշադրութիւն դարձրեց՝ պալատից դուրս գալու ժամանակ զինուորական պատիւներ տուող զինուորի տաւրօրինակ ձևերի վրա։ Թագաւորը կանչեց պալատի կօմենդանտ գեներալ Լօպէցին և պատուիրեց նրան քննութիւն կատարել։ Հարցուփորձից իսկոյն երևաց, որ այդ մարդը զինուոր չէ։ Նա անյայտաղ ձերբակալվեց և խոստովանվեց, որ ինքը պատկանում է «Սև խաչի ընկերութեան», հէնց այն գաղտնի դաշնակցութեան, որի անդամն էր կօնստանդին Բօյկան, Կարլօս թագաւորի սպանողը։ Թագաւորական ամբողջ պահակախումբը ձերբակալվեց իր ամբողջ կազմով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

2 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 31-ին բացվեց այն ժանաժողովի նիստը, որին պաշտօն է տրված քննել նաւթային վառելիքի թանգանալու հարցը և այդ թանգութեան դէմ միջոցներ գտնելու խնդիրը։ Մասնաժողովի նիստերին մասնակցում են վարչութիւնների, Վոլգայի բօրսային կօմիտէների, նաւատէրերի հանգուստարների կօմիտէի, Բագուի նաւթարդիւնաբերողների համագումարի խորհրդի, մի քանի առևտրական և նաւային ձեռնարկութիւնների ներկայացուցիչները։

ԽԱՐԿՕՎ։ Զրի մակերևոյթը գետերում իջաւ։ Մարգային զոհեր չը կան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երկրագործութեան վարչութիւնը, նկատի առնելով որ գուցէ խօլերա երևան գայ կրկին, հրահանգով առաջարկեց միջնակարգ գիւղատնտեսական դպրոցներին մի շարք միջոցներ ձեռք առնել՝ կրթական հաստատութիւններում համաճարակի առաջն առնելու համար։

ՍԷՎԱՍՏՕՊՕԼ։ «Ամֆիտրիտա» զբօսանաւով տեղս հասան հելլէնների թագաւորը, Նիկոլայ և Անդրէյ արքայորդիները իրանց ամուսիններով և գահաժառանգ Արիստաֆօրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դատաստանական պալատը «Крестьянскій депутатъ» և «Трудовая Россія» լրագիրների նախկին խմբագիր, առաջին Դումայի նախկին անդամ Տեսլին դատապարտեց երկամեայ բանտարկութեան քրէական պատժագրքի 103-դ և 129-րդ յօդուածներով։ Տեսլին անմիջապէս ոտիկանական հսկողութեան տակն առան, որից ազատվելու համար նրանից իբրև գրաւական պահանջվում է 10000 բուբլի։

Դատաստ. պալատը սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեանը պատկանելու համար Վվեդենի գիմնազիայի աշակերտ Այշէվին դատապարտեց 1 տարի և 4 ամիս բանտարկութեան։

Ա ր տ ա ք ի ն

2 ապրիլի

ԲԷԼԳՐԱԴ։ Սկուպշչինայում արդարադատութեան մինիստրը կարդաց, ուշք չը դարձնելով երիտասարդ արմատականների բողոքներին, թագաւորական հրովարտակը սկուպշչինայի արձակման մասին։ Ընթերցման ժամանակ կառավարական կուսակցութեան աթոռներում լսվում էին ցնծագին «ժիվիո» աղաղակներ։ Նոր ընտրութիւնները նշանակված են մայիսի 18-ին, սկուպշչինայի գումարումը՝ յունիսի 4-ին։

ՊԱՐԻԶ։ Հավասի տեղեկութիւնների համաձայն, պատգամաւորական լիազօրութիւնները ստուգելը Լիսաբօնում անցնում է առանց միջադէպերի։ Պօրտուգալիայում տիրում է լիակատար կարգուկանոն։

ՀՌՕՄ։ Թագաւորը մասնաւոր ունկնդրութեան ընդունեց իշխան Բիւլովին։

ԲԵՐԼԻՆ։ Բօրսայի տեղեկութիւնների համաձայն, պետական և պրուսական փոխառութիւնների համար մինչև օրս ստորագրված է 710 միլիոն մարկ։

ՀՌՕՄ։ Բիւլովի և Տիտաոնու վերջին տեսակցութիւնների առիթով «Տրիբունա» և «Զիորնալե դ'Իտալիա» լրագիրները ընդգծում են, որ լիակատար համակերպութիւն և միանմանութիւն կայ երեքպետեան միութեան հայեացքների միջև, միջազգային առևտրական, մասնաւորապէս բալկանեան հարցերի վերաբերութեամբ։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ։ Ֆօլկէտինգը վերջնականապէս ընդունեց լանդտագի հաւանած այն օրինագիծը, որի համաձայն 25 տարեկանից անց երկու սեռի մարդիկ օգտվում են ընտրողական ձայնի իրաւունքով համայնական հաստատութիւնների ընտրութիւնների ժամանակ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՍԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱԿԱՆ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ՍԱՌՆՈՂՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՑԺ Ե. Կ. ԽՕՌՆԵՎԱ—9½—2 ժ. տառմի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. ժանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Գնաթը 50 կ.։ Զրաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Խարկովի հասարակութիւնը, ի նկատի ունենալով Թիւրքական Հայաստանի հայ ժողովրդի՝ սովի ճանկերում տառապող անախանձելի դրութիւնը և կամենալով օգնութեան ձեռք մեկնել իր քաղցած եղբայրներին, ընտրեց երեք անձնաւորութիւններից բաղկացած մի հանգանակիչ յանձնախումբ, որի ջանքերով հանգանակվեց 604 բուբլու մի գումար։

Ցիշեալ հանգանակիչ յանձնախմբի անդամներն են՝ Տիգրան Կարէքցեան, Մովսէս Սարգիսեան և Բերովբէ Եսայեան։

Իսկ վերոյիշեալ 604 բուբլին հանգանակված է հետևեալ նուիրատուներից.

Ա. Քեօսաեան, Մ. Ղուկասեան և եղբ. Ց. և Պ. Կալանեան՝ 25-ական բ., Պ. Փաջաջեան, Ա. Տէր-Կարապետեան, Դ. Մելիքեան և Մ. Սարգիսեան՝ 15-ական բ., Ա. Աղամեան, Ց. Աւդալեան, Տ. Տէր-Կարապետեան, Գ. Սարգսեան, Ց. Ղազարեան, Պ. Սահակեան, Է. Քեօսաեան, Գ. Իշխանեան, Ց. Էկոզեան, Պ. Քըչուբեան, Ց. Համշինեան, Մ. Եանուխեան, և Գ. Եսայեան՝ 10-ական բ., Ց. Ոսկանեան, Կ. Դաբաղեան և Ս. Ղազանչիեան՝ 8-ական բ., Ց. Ուզունեան և Ց. Սուխանօվ՝ 7-ական բ., Պ. Սեթեան, Պ. Թօփչեան, Հուսէյն Եանուխ-օղլի, Ց. Դոգռեան, Ց. Ծաղիկեան, Ս. Սանոսեան, Մ. Գոգռեան, Վ. Զաուշեան, Ց. Մայիլեան, Ց. Թորոսեան, Կ. Ցաբլանեան, Մ. Եանուխեան, Խ. Դուզանչեան, Ց. Յովսէփեան, Շ. Յովհաննէսեան և Մ. Սէմէրջեան՝ 5-ական բ., Կ. Բալչիեան՝ 4 բ., Վ. Ղամարեան, Ս. Ղազանչեան, Ց. Աղամեան, Խ. Ղազարեան, Պ. Ալօղեան, Թ. Ստեփանեան, Փ. Էքնարեան, Ս. Սեթեան, Ն. Ասլանեան, Լ. Ճարակեան, Մ. Տէր-Կարապետեան, Ա. Կասարեան, Ե. Դարբինեան, Կ. Հէնօեան, Մ. Ենուղեան, Ց. Եղիկեան, Հ. Զաուշեան, Գ. Քէշիշեան, Կ. Նազարեան, Գ. Արութեան, Ա. Եսայեան, Ա. Քէշիշեան, Ա. Կիւրեղեան, Մ. Ղազարեան, Գ. Բալասանեան, Մ. Տէր-Բաղդասարեան, Տ. Կարէքցեան և Գ. Բատասեան՝ 3-ական բ., Մ. Մելքոնեան և Բ. Զօլօեան՝ իւրաքանչիւրը 2 բ. 50 կ., Ց. Թօփչեան, Ա. Բուռնազեան, Հուսէյն Մօլլա օղլի, տիկ. Աւդալեան, Ս. Մելքոնեան, Պ. Եսայեան, Փիլոս Կրթմելի, Ս. Ասլանեան, Մ. Թարվերդեան, Օնանօվ, Գ. Թուղիեան, Մ. Սօլոյժի, Պ. Նշանեան, Մ. Ներինեան, Տ. Գէորգեան, Գ. Քիւփալեան, Գ. Զութիկեան, Գ. Գոգռեան, Պ. Անտօնեան, Պ. Եանուղեան, Ց. Ցարութիւնեան, Պ. Քիւփարեան, Մելիքեան, Մ. Մինասեան, եղբ. Դարախչեաններ, Սէմէրջի Համբարձումի մայրը, Կ. Բաբուչեան և Մ. Իսբիրեան՝ 2-ական բ., Ս. Ցարութիւնեան՝ 1 բ. 50 կ., Թ. Նազարեան, Պ. Ունանեան, Մ. Մկոջիեան, Գ. Աւդալեան, Ս. Մուրադեան, Պ. Աբօյեան, Ց. Աբէլեան, Մ. Սաբօյեան, Ց. Ղուլումջիեան, Ե. Դաբաղեան, Ց. Աւենեան, Ս. Բալախեան, Մ. Սեթեան, Եղիազար, Գ. Գազօյեան, Գ. Թափոսեան, Բ. Մանուկեան, Ա. Մարգարեան, Վ. Խլտճեան, Բ. Դաւթեան, Մ. Ցարութիւնեան, Հ. Գրիգորեան, Հ. Համբարեան, Ց. Ղազանչեան, Գ. Աւդալեան, Կ. Ղազարեան, Ա. Եանուղեան, Ս. Մահսէնեան, Է. Դաղաղեան, Ա. Պողոսեան, Մ. Թովասեան, Ս. Նորագեան, Ա. Մարգարեան, Խ. Անգլեան, Պ. Կոստանեան, Ս. Աղօյեան, Ա. Աղօյեան, Ռ. Ուրուշանեան, Տ. Պետրոսեան, Բ. Ցարութիւնեան, Փ. Քիսիլեան, Վ. Ծաղիկեան, Գ. Մկօյեան, Մ. Կաղօյեան, Կ. Կրպօյեան, Պ. Ղևոնդեան, Ա. Պետրոսեան, Ց. Տէր-Բարդուղիմէոսեան, Վ. Փահլէվանեան, Ա. Աղաբաբեան, Գ. Ցովհաննէսեան, Ե. Քէշիշեան, Ս. Պողոսեան, Հ. Ադամեան, Մ. Դաւթեան, Ս. Լաշեան, Խ. Շուլիօ, Բ. Գալստեան, Մ. Սրաբեան, Ա. Ի. Արութիւնով, Խ. Գուրջիեան, Ս. Ասլանեան, Մ. Հնձացի, Ծատուր Լէբլեբիջիկեան, Ս. Տէրտէրեան, Մ. Ազօեան, Կ. Եղիկեան, Գ. Ակօեան, Սարգիս Ազօյեան և Սողոմոն՝ 1-ական բ., Ա. Բալաջեան՝ 50 կ.։ Ընդհանուր գումարը՝ 604 բ.։

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՊՐՕԳՐԵՄԸ ԵՒ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ

(սօցիօլօգիական պրօբլեմներ)

հետևեալ բովանդակութեամբ.

Առաջաբան։ Ներածութիւն։ Առաջին հատուած. Ազգ, դասակարգ եւ կուսակցութիւն. I գլուխ. Ազգ և դասակարգ.—II գլ. Դասակարգային իդէօլօգիա, կուսակցութիւն.—III գլ. Ազգը և դասակարգային կուսակցութիւնը։ Երկրորդ հատուած. Դասակարգային տիրապետութիւնը.—IV գլ. Տիրապետող և տիրապետվող դասակարգերը—բուրժուազիան և պրոլետարիատը.—V գլ. Հասարակութեան միւս շերտերը.—VI գլ. Դասակարգային պետութիւն.—VII գլ. Ազգայնութեան և ազատ քաղաքացիութեան սկզբունքը։ Երրորդ հատուած. Բուրժուական նացիօնալիզմը եւ նրա զանազան ձեւերը. VIII գլ. Ի՞նչ է նացիօնալիզմը.—IX գլ. Ի՞նչ է պատրիոտիզմը.—X գլ. Ազրեսսիվ կամ նուաճողական նացիօնալիզմը.—XI գլ. Դեմոկրատական նացիօնալիզմը.—XII գլ. Բուրժուական իմպերիալիզմը և պանիզմը։ Չորրորդ հատուած. Պրոլետարական ինտերնացիօնալիզմը. XIII գլ. Պրոլետարիատի դասակարգային և ազգային քաղաքականութիւնը.—XIV գլ. Պրոլետարիատը և հայրենասիրութիւնը.—XV գլ. Պրոլետարիատը և ազգային հարցը։ Հինգերորդ հատուած. Վերջաբան. XVI գլ. «Ազգային կուսակցութիւն և ազգային քաղաքականութիւն».—XVII գլ. Եզրափակիչ դիտողութիւններ։

310 երես, գինն է 50 կօպ., քանակով գնողներին՝ զեղչ։

Դիմել՝ Թիֆլիս «Գուտահնբերգ», «Փարոս» գրախանութներին և «Գործ» խմբագրատան։ Բացում՝ «Սօտրուդնիկ» գրավաճառ. և «Յոյս» բիւրօյին (Газетн. Бюро „Уйсъ", уг. Балаханск. и Магазин. ул.).

о. д. 5—1

Մարտի 31-ին լոյս տեսաւ

„ԳԵՂԱՐՈՒԵՍՏ"

Գրական գեղարուեստական երաժշտական պատկերազարդ հանդիսի

Ա. ԳԻՐՔ—ՄԱՐՏ

(Բովանդակութիւնը տես «Մշակ» № 59)

Բաժանորդագրութիւնը շարունակվում է.

Տարեկան՝ (10 գիրք) արտասահման 40 ֆր.
Հատավաճառ 2 բուբ. (8 ֆր.)

Խմբագրութեան հասցէն՝ Бебутовская, № 12. Օտար տեղերից դիմել՝ Тифлисъ, редакція „Гехарвестъ". Հատով վաճառվում է և բաժանորդագրութիւն ընդունվում Թիֆլիսում նաև «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութներում, ինչպէս և Սուքասեանի երաժշտակ. մագազինում, Բագուում «Сотрудникъ» գործակալութեան մէջ։

Խմբ.-հրատ. Գ. Լևոնեան

(о. д.) 5—2

ՀԱՅՏՆՈՒՄ ԵՆՔ

ի գիտութիւն հայոց եկեղեցականների, որ մեզ մօտ պատրաստվում են

ՆՇԽՈՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

հայոց հաշակի, գեղեցիկ քանդակով—խաչելութեան։ Գինը 3 բ., քաղաքից դուրս գնողներին 3 բ. 50 կ.։ Ծախվում է և ծակոտիչ, գինը 50 կ.։ Հասցէն՝ Թիֆլիս, Վիննի-Պաղեսմ, № 47 (7-րդ քաղաքամասում) Գասպար Տէր-Սարգսեանցին։

(շ. է. հ.) 3—3

Աստրախան գնացողներին խնդրում ենք այլի առաջ ունենալ այնտեղ գտնվող

ԱՐՄԷՆԻԱ

ՀԻՒՐԱՆՈՑԸ

(Բիրժայի դիմաց)

որը ունի մաքուր կահաւորված սենեակներ՝ սկսած 50 կօպէկից, ասիական և եւրօպական խոհանոց։ Ստացվում են լրագիրներ։ Գները մատչելի են։

(ռ. հ. հ. շ.) 4—3

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մանաւանդ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Օլօլակ, Բենեթեան փողոց № 33.

(ա. օ.) 100—27

Առաջին Կովկասեան Պահեստ

ՍԵՐՄԵՐԻ

ԶԱՐԹԷ

Գոյութիւն ունի 1872 թ-ից
№ 23, Միխայլովսկի պր., № 23
առաջարկում է

ՍԵՐՄԵՐ

ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ

բանջարանոցի
ծաղիկների
խոտերի
ծառերի

ՄԻՆՉԵՎ ՍԵՐՄ

Ցայսնի ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ Բաղդադի։ Տուփիկին է—6 մսխալը—2 բուբլի։ Գումարով գնողներին զեղչ։

(ա. օ.) 10—8

Լոյս տեսաւ
ՀՄԵՂԻ

X հարուստը կոապաշտ

և

Մախաթի ծակում

գրքոյկը, 28 էջ։ Գինն է 8 կօպ.
Հարցնել գրախանութներում։

(հ. կ.) 10—2



ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ

ԿՕՇԿԵՂԷՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՍԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.

Սմեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։

ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ

Իսկականը այս կէյմօն ունի իր վրա։

ԳՈՒՄԱԲՈՎ ՎԱՃԱՌՔԸ կատարում է „ԼՅՕՊՕԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐ" ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՄՕՍԿՎԱՑՈՒՄ ՐԻԳԱՑՈՒՄ ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ ՕԴԵՍՍԱՑՈՒՄ ՐՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՏԱՇԿԷՆՏՈՒՄ

Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկեան ռետին. մանուֆակտուրային ընկերութեան

Կրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.

(հ. կ.) 100—16

ԿՈՎԿԱՍԵԱՆ

ՀԱՆՔԱՑԻՆ

ԶՐԵՐ

ՊԵՍՏԻԳՕՐՍԿ (հանրային ջրեր) ԷՍԷՆՏՈՒԿԻ (ազի-ալկալի) ԺԷԼԷԶՆԱՎՕԴՍԿ (հողային) ԿԻՍԼԱՎՕԴՍԿ (ածխաթթվային նարզ...

Զրեր ներքին գործածութեան և վաննաների համար, ցիարուժութիւն և ջրարուժութիւն էլեքտրօ-լուսաբուժական կաբինետ (բենեան)։ Սեիանտէրսպա ...ի։ Կուսլս, կէգիր, լեռնային կլիմայական կայաններ Կիսլովոդսկում և Ժելեզնովոդսկում։ Աջողութեամբ բժշկվում են՝ ոսկրացաւը, սիֆիլիս, կաթարներ, ջրային, կաշուի, կանանց, լեարդի, ստամոքսի, աղիքների, երիկամունքի հիւանդութիւններ, պօղարա, չաղութիւն, չալարի հիւանդութիւն, արիան պակասութիւն, շնչառութեան և ...ի։ Մանկական խաղերի փոքրիկ հրապարակներ։ Թարօններ, սիզաձիրական կենցերներ ամեն օր։ Գատակեր, ...նոցներ, էլեքտրական լուսաւորութիւն, տրամվայ։ Հիւրանոցներ, հաշարանները, սրճարանները, ընթերցարանները շատ կան յարմար ...նեակներ մասնաւոր տներում։ Եկողների թիւն է 40,000.

Սեզօնը Պեատիգօրսկում մայիսի 1-ից մինչև սեպտ. 15-ը, Էսէնտուկում մայիսի 10-ից մինչև սեպտ. 10-ը, Ժելեզնովոդսկում մայիսի 25-ից մինչև սեպտ. 1-ը, Կիսլովոդսկում յուլիսի 1-ից մինչև հոկտ. 1-ը։ Սեզօնի սկզբում և վերջում վանները և բժշկութեան ուրիշ եղանակները շատ աւելի էժան են, քան սեզօնի վառ ժամանակը։

Արտօնաւոր բժշկութեան իրաւունք վանօթանների որոշ քանակութեամբ իւրացնելիս կուրօրտում կարելի է տալ չքաւոր ...ներին (որոնք ունեն 600 բուբլուց աւելի տարեկան եկամուտ) միայն հետևեալ ժամանակամիջոցներում. Պեատիգօրսկում մայիսի 1-ից մինչև յունիսի 10-ը և օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը, Էսէնտուկում—մայիսի 10-ից մինչև յունիսի 10-ը և օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 10-ը. Ժելեզնովոդսկում մայիսի 15-ից մինչև յունիսի 10-ը և օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 10-ը։ Կիսլովոդսկում—յունիսի 1-ից մինչև յուլիսի 1-ը և օգոստոսի 15-ից մինչև հոկտեմբերի 1-ը։ Ուսուցիչներին և ուսուցչուհիներին տալանալ բժշկութեան իրաւունք տրվում ամբողջ սեզօնի ընթացքում։

Արտօնեալ հիւանդները իրաւունք ունեն ձրի բժշկվել վաննաներով, դուշերով, ցեխով և ջրով աղբիւրների մօտ։ Սքտօնեալ բժշկութեան իրաւունք ստանալու համար պարտադիր է գրվել առաջուց, ներկայացնելով ջրերի վարչութեանը (Պեատիգօրսկում) բժշկվելու ցանկութեան մասին յայտարարութեան հետ միասին. 1) վկայական որևէ վարչական կամ հասարակական հիմնարկութիւնից խնդրողի չքաւորութեան մասին, 2) բժշկական վկայական, որի մէջ մատնացոյց արված պէտք է լինի այն կուրորտ հիւանդը պէտք է բժշկվի, 3) պօստային երկու 7 կօպէյկանոց մարկաներ ապահովանքի համար։ Այլես գրվել չէ կարելի պատնեալ բժշկութեան համար։ առաջին ...թի համար ապրիլի 1-ին և երկրորդ հերթի համար յուլիսի 1-ին։ Ջրի բժշկութեան մասին իրաւասնիչը խնդիրքին ջրերի վարչութիւնը կը հաղորդէ իր պատասխանը ...մանացոյց արված հասցէով։ Առանց նախապէս գրվելու արտօնեալ բժշկութեան իրաւունք չէ տրվում։

(հ. շ.) 4—1

Ջրերի դիրեկտօր՝ Ծ. Տիլիչէև

Типографія „Экономія" Авака Мугдусіакопова съ С-ми.

Большая Ванкская ул. д. Семиноріи № 8.